

**Հաստատված է
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Վարչության 10.09.2026թ. որոշմամբ
Ուժի մեջ է 25.09.2026թ.-ից**

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն Պայմաններն ու կանոնները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են հաճախորդներին վճարային քարտերի տրամադրման և քարտային հաշվի բացման և սպասարկման կարգն ու պայմանները և կարգավորում են քարտի և քարտային հաշվի հետ կապված Կողմերի միջև ծագած հարաբերությունները:

1.2. Կանոնները բոլոր Քարտապանների համար համարվում են տիպային (ստանդարտ ձև) և սահմանում են Բանկի և Քարտապանի միջև կնքվող պայմանագրի/դիմում-պայմանագրի պայմանները:

1.3. Բանկը հաճախորդին տրամադրում է քարտ՝ Բանկի սահմանած ձևանմուշով հաճախորդի Բանկ ներկայացրած դիմում-պայմանագրի հիման վրա, որով հաճախորդը հաստատում է Պայմանների ընդունումը (ակցեպտավորումը):

1.4. Վճարային քարտերի սպասարկման պայմանները գործում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, ArCa, Vsa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների, Բանկի հիմնական պայմանների, ինչպես նաև սույն Պայմանների:

1.5. Բանկը թողարկում է ինչպես ֆիզիկական կրիչով քարտեր, այնպես էլ թվային քարտեր:

1.6. Պայմանների բոլոր դրույթները վերաբերում են նաև թվային քարտերին, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան դրույթում կամ Բանկի սակագներում, կամ այլ բան չի բխում Պայմանների կամ Բանկի սակագների առանձին դրույթի բովանդակությունից:

1.7. Թվային քարտը պարունակում է բոլոր տվյալները, ինչ ֆիզիկական կրիչով քարտը, այն է՝ քարտի համար, Քարտապանի անուն, ազգանուն, CVC2/ CVV2 կոդ, վավերության ժամկետ:

1.8. Ֆիզիկական կրիչով քարտը կարող է լինել անհպում տեսակի:

1.9. Անհպում քարտով հնարավոր է կատարել անհպում վճարումներ:

1.10. Անհպում քարտի վրա առկա է համապատասխան նշան, ինչպես ներկայացված է ստորև՝



1.11. Քարտով դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային միջոցների շարժը (մուտքագրումներ, ելքագրումներ), կանխիկ և անկանխիկ եղանակով օգտագործումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, ArCa, Visa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների և սույն Պայմանների:

1.12. Քարտով, ինչպես նաև առկայության դեպքում՝ լրացուցիչ քարտ(եր)ով կատարվող գործարքների համար միջոցների շրջանառությունն ապահովելու նպատակով Բանկը Քարտապանի համար բացում է քարտային հաշիվ:

1.13. Քարտային հաշիվը բացվում է Հիմնական քարտապանի անունով:

1.14. Քարտային հաշիվը բացվում է այն արժույթով (արժույթներով), որը Քարտապանը նշել է դիմումում: Հաշիվը, որպես կանոն, կարող է բացվել հետևյալ արժույթներով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և Եվրո: Բանկի կողմից տրամադրվում են նաև բազմարժույթային քարտեր:

1.15. Քարտը վավեր է մինչև քարտի վրա նշված՝ քարտի գործողության ժամկետի համապատասխան ամսվա վերջին օրը ներառյալ:

1.16. Գործողության ժամկետը լրանալուց հետո կամ պայմանագրի/դիմում-պայմանագրի լուծման դեպքում Քարտն արգելափակվում է և համակարգի սպասարկման կետերի կողմից ընդունման ենթակա չէ:

1.17. Ֆիզիկական կրիչով թողարկվող քարտը Բանկի սեփականությունն է և Բանկի պահանջով պետք է վերադարձվի Բանկ:

1.18. Սույն Պայմաններում սահմանված կանոնների և պահանջների խախտումով՝ քարտով կատարված գործարքների, ինչպես նաև քարտի, ՊՆԼ-կողի, քարտի վրա նշված վավերապայմանների (քարտի համար, CVC2/CVV2 կոդ, վավերության ժամկետ) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

1.19. Սույն պայմաններում կիրառվող հասկացություններն են՝

Բանկ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.10.2001թ. թիվ 260Ա որոշմամբ, բանկային գործունեության լիցենզիա թիվ 81).

Վճարահաշվարկային համակարգ՝ միջազգային կամ տեղական միասնական համակարգ, որն ապահովում է համապատասխան համակարգում թողարկված վճարային քարտերով գործարքների իրականացումը.

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգ՝ ՀՀ տարածքում վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգն է կամ ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգ, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ է (ARCA համակարգ).

Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգ՝ ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգն է, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ չէ (մասնավորապես, VISA և MasterCard համակարգեր).

Վճարային քարտ (այսուհետ նաև՝ Քարտ)՝ դեբետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկող բանկի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար.

Վճարային գործիք՝ թղթային, էլեկտրոնային, ձայնային (կամ այլ եղանակով ներկայացված) հաղորդագրություն է, փաստաթուղթ կամ համաձայնություն, որը, անկախ օգտագործման, կիրառման կամ իրականացման ձևից ու եղանակից, հնարավորություն է ընձեռում դրա տիրապետողին և (կամ) օգտագործողին կատարելու վճարումներ.

Քարտային հաշիվ (այսուհետ նաև՝ Հաշիվ)՝ Բանկում Քարտապանի անվամբ բացված հաշիվ, որով հաշվառվում են Քարտով կատարված բոլոր գործարքները.

Քարտապան՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր.

Լրացուցիչ Քարտ՝ Քարտապանի կողմից լիազորված անձին օգտագործման համար տրամադրված Քարտ՝ համաձայն Քարտապանի գրավոր դիմումի: Լրացուցիչ քարտով գործառնություններն իրականացվում են Քարտապանի լիազորված անձի կողմից, Քարտապանի կողմից սահմանված սահմանաչափի սահմաններում, ընդ որում այդ գործառնությունների հետ կապված ամբողջ պատասխանատվությունը ստանձնում է Քարտապանը.

Գործարք՝ քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ՝ քարտով ցանկացած գործառնության կատարում, այդ թվում ապրանքների կամ ծառայությունների դիմաց վճարում, կանխիկի ստացում և այլն.

Հավաստագրում (ավտորիզացիա)՝ թողարկողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից վճարային քարտով գործառնությունների կատարման թույլտվության ստացման գործընթաց.

Գաղտնաբառ՝ Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտի և քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, Բանկի կողմից սահմանված դեպքերում՝ քարտի սպասարկման հետ կապված հարցերով հեռախոսակապի միջոցով Բանկ դիմելու, ինչպես նաև Բանկի և/կամ ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված այլ դեպքերում.

Սակագներ՝ Բանկի կողմից սահմանված և հաստատված, Քարտերի տրամադրման և սպասարկման նպատակով հրապարակված սակագները, ներառյալ՝ Բանկի առանձին որոշմամբ սահմանված հատուկ, փոփոխված և/կամ արտոնյալ սակագները.

Քարտի կասեցում (բլոկավորում)՝ տվյալ համարով քարտին ցանկացած գործարքի հավաստագրման հարցման ժամանակավոր կամ վերջնական մերժում.

Անհափական նույնականացման համար (ՊԻՆ-կոդ)՝ Քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգերի կանոններով նախատեսված դեպքերում քարտով գործարքներ կատարելիս.

Գերաժախս՝ Քարտապանին հասանելի դրամական միջոցներից ավել գումարի օգտագործում.

Վճարային սահմանաչափ՝ դրամական միջոցների չափ (Քարտային հաշվի մնացորդը և վարկային գծի (օվերդրաֆտի) հանրագումարը՝ բացառությամբ չնվազող մնացորդի), որի սահմաններում Քարտապանը կարող է ստանալ կանխիկ գումար և կատարել անկանխիկ վճարումներ.

3D Secure համակարգ՝ վիրտուալ միջավայրում իրականացվող գործարքների անվտանգությունը ապահովելու նպատակով ստեղծված գործիք, որից օգտվելու պարագայում հաճախորդն իր կողմից վիրտուալ միջավայրում կատարած գործարքը հաստատում է իր բջջային հեռախոսին SMS-հաղորդագրության միջոցով ստացված կոդի կիրառմամբ.

Քաղվածք՝ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվող հաշվետվություն քարտային հաշվով (ներառյալ՝ հիմնական և հավելյալ քարտերով) կատարված գործառնությունների վերաբերյալ.

Թողարկող՝ վճարային քարտը թողարկող բանկ.

CVC2/CVV2 կոդ՝ քարտի դարձերեսին նշված և Քարտապանին նույնականացնող կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից ինտերնետ միջավայրում գործարքներ կատարելիս.

Stop-list՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որտեղ քարտապանի կամ Բանկի ցանկությամբ տեղադրվում են հափշտակված քարտերի համարները՝ դրանց միջոցով առանց հավաստագրման գործարքների իրականացումը կանխելու նպատակով.

Սպասարկող (merchant)՝ առևտրի, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման կետ, այդ թվում՝ վիրտուալ միջավայրում, որը վճարային քարտի սպասարկում

իրականացնող բանկի հետ կնքել է պայմանագիր՝ իր կողմից վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների դիմաց վճարային քարտը որպես վճարամիջոց ընդունելու վերաբերյալ.

Բանկոմար՝ գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ինքնասպասարկման սարք, որն ապահովում է ֆինանսական գործառնությունների իրականացումն առանց ֆինանսական կազմակերպության աշխատակցի հաստատման.

ՊՈՍ տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման դիմաց, այդ թվում՝ վիրտուալ միջավայրում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու կամ բանկի կամ վերջինիս տարածքային ստորաբաժանման տարածքում վճարային քարտով կանխիկացման կամ անկանխիկ գործառնություն կատարելու համար.

Պրոցեսինգային կենտրոն՝ իրավաբանական անձ կամ նրա կառուցվածքային ստորաբաժանում, որն ապահովում է բանկային քարտերի սպասարկման գործընթացում մասնակիցների միջև տեղեկատվական և տեխնոլոգիական փոխհարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ՔԱՐՏԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ԱԿՏԻՎԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԹՈՂԱՐԿՈՒՄ

2.1. Բանկի կողմից քարտը թողարկվում է Քարտապանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ Բանկի կողմից սահմանված բոլոր վճարումները կատարելու դեպքում՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Առաքման եղանակով քարտը և ՊԻՆ-կոդը (առկայության դեպքում) տրամադրելու դեպքում առաքման ժամկետը սահմանվում է առաքման ծառայություններ մատուցող ընկերությունների պայմաններով:

2.2. Քարտի թողարկման դիմումը հաճախորդը կարող է ներկայացնել ինչպես Բանկի մասնաճյուղերում, այնպես էլ առցանց՝ անցնելով կենսաչափական նույնականացում Բանկի կայքում կամ օգտվելով Բանկի կողմից տրամադրված QR կոդից:

2.3. Visa Business տեսակի քարտերը կորպորատիվ քարտեր են, որոնք տրամադրվում են միայն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին: Տվյալ դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը հանդիսանում է քարտապան, իսկ իրավաբանական անձի ղեկավարը կամ լիազորված աշխատակից՝ քարտն օգտագործող անձ:

2.4. Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին Բանկը տրամադրում է Visa, Mastercard միջազգային վճարային համակարգերի և ArCa տեղային վճարային համակարգի հետևյալ տեսակի վճարային քարտեր՝

- 1) Visa Classic, Visa Gold, Visa Signature, Visa Infinite,
- 2) MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard World, MasterCard World Travel, Mastercard World Elite,
- 3) ArCa Classic:

2.5. Visa Classic տեսակի քարտի հիմքով Բանկի կողմից տրամադրվում են նաև հետևյալ քարտատեսակները՝

- 1) Դեբետային քարտ "Ս - Teenager" (նախատեսված է ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոնց տարիքը կազմում է 14-25 տարեկան (ներառյալ)),
- 2) Դեբետային քարտ "Դպրոցականի" (նախատեսված է ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար, որոնց տարիքը կազմում է 6-13 տարեկան (ներառյալ)),
- 3) Մայրական նպաստի քարտ:

2.6. ArCa Classic տեսակի քարտի հիմքով Բանկի կողմից տրամադրվում են նաև ArCa Թոշակային քարտեր, որոնք նախատեսված են թոշակառուների համար:

2.7. Բացի սույն պայմանների 2.4-2.6 կետերում նշված քարտատեսակներից, Բանկի կողմից հաճախորդներին տրամադրվում են նաև հետևյալ անանուն քարտերը՝

- 1) No Name քարտ,
- 2) Non Cash քարտ,
- 3) Նվեր քարտ:

2.8. Անանուն քարտերի օգտագործման առանձնահատկությունները՝

2.8.1. No Name և Non Cash քարտերի դեպքում՝

1) քարտերով կարող են իրականացվել կանխիկացման և անկանխիկ գործարքներ, այդ թվում՝ կանխիկ տրամադրում Բանկի կանխիկացման կետերում, տեղական և այլ բանկերի կանխիկացման կետերում, ինչպես նաև վճարումներ առևտրային կետերում:

2) քարտերով իրականացվող գործարքների օրական ընդհանուր սահմանաչափը, որը ներառում է կանխիկ և անկանխիկ գործարքները, սահմանվում է **500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**, ընդ որում՝ օրական գործարքների առավելագույն քանակը կազմում է **15 գործարք**:

3) Բանկի և այլ բանկերի կանխիկացման կետերում քարտից կանխիկ միջոցների տրամադրման համար սահմանվում է **5% միջնորդավճար**:

4) Այլ բանկերի կանխիկացման կետերում կիրառվող 5% միջնորդավճարը ներառում է Բանկի կողմից գանձվող միջնորդավճարը և չի ներառում տվյալ բանկերի կողմից գործարքի համար սահմանված հնարավոր լրացուցիչ միջնորդավճարները, որոնք կարող են գանձվել գործարքի իրականացման ընթացքում:

5) քարտով անկանխիկ վճարումներն իրականացվում են **առանց միջնորդավճարի**:

6) քարտից քարտ փոխանցումներ չեն իրականացվում:

7) քարտերի համար կցված քարտի տրամադրում չի իրականացվում:

8) քարտերի գործողության ժամկետը սահմանվում է **2 տարի**:

2.8.2. Նվեր քարտերի դեպքում՝

1) քարտերով կարող են իրականացվել կանխիկացման և անկանխիկ գործարքներ, այդ թվում՝ կանխիկ տրամադրում Բանկի կանխիկացման կետերում, տեղական և այլ բանկերի կանխիկացման կետերում, ինչպես նաև վճարումներ առևտրային կետերում:

2) քարտի արժույթը՝ ՀՀ դրամ:

3) քարտին հնարավոր է համալրել 10 000 - 300 000 ՀՀ դրամ: Կրկնակի համալրում չի թույլատրվում:

4) քարտերով իրականացվող գործարքների օրական ընդհանուր սահմանաչափը, որը ներառում է կանխիկ և անկանխիկ գործարքները, սահմանվում է **300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ**, ընդ որում՝ օրական գործարքների առավելագույն քանակը կազմում է **15 գործարք**:

5) Բանկի կանխիկացման կետերում քարտից կանխիկ միջոցների տրամադրման համար սահմանվում է **3% միջնորդավճար (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)**, **ՀՀ տարածքում գործող բանկերի կանխիկացման կետերում՝ 4% միջնորդավճար (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)**, **արտասահմանյան բանկերի կանխիկացման կետերում՝ 5% միջնորդավճար (նվազագույնը 1000 ՀՀ դրամ)**:

6) քարտով անկանխիկ վճարումներն իրականացվում են **առանց միջնորդավճարի**:

7) քարտից քարտ փոխանցումներ չեն իրականացվում:

8) քարտերի համար մոբայլ բանկինգ ծառայությունը հասանելի չէ:

9) քարտերի համար կցված քարտի տրամադրում չի իրականացվում:

10) քարտերի գործողության ժամկետը սահմանվում է **1 տարի**:

11) քարտերը չեն վերաթողարկվում:

2.9. Քարտը և ՊԻՆ-կոդը (առկայության դեպքում) քարտապանին տրամադրվում են Բանկի կողմից սահմանված կարգով: Քարտը ստանալուց հետո Քարտապանը պետք է ստուգի քարտի վրա նշված տվյալների ճշտությունը և քարտի ֆիզիկական ամբողջականությունը:

2.10. Եթե քարտը թողարկվում է ՊԻՆ-կոդով, ապա ՊԻՆ-կոդը տրամադրվում է փակ ծրարով: Քարտապանը պետք է ստուգի ՊԻՆ-կոդի ծրարի փակ և ամբողջական լինելը:

2.11. Քարտի և ՊԻՆ-կոդի ծրարի ստուգման արդյունքում անհամապատասխանություններ կամ այլ խնդիրներ հայտնաբերելու դեպքում Քարտապանն անհապաղ պետք է տեղեկացնի դրա մասին Բանկի աշխատակցին:

2.12. Քարտն առանց ՊԻՆ-կոդի թողարկելու դեպքում ՊԻՆ-կոդը սահմանվում է Քարտապանի կողմից՝ քարտի ակտիվացման ընթացքում:

2.13. Քարտի տրամադրումից և ակտիվացումից (անհրաժեշտության դեպքում) հետո Քարտապանը հնարավորություն է ստանում քարտով իրականացնել Բանկի և տվյալ վճարահաշվարկային համակարգի կողմից տվյալ քարտատեսակի համար նախատեսված բոլոր գործառնությունները:

2.14. Քարտի ակտիվացումը և ՊԻՆ-կոդը սահմանումը կատարվում են միայն Բանկի բանկոմատների միջոցով և քարտը բանկոմատ մուտքագրելու տարբերակով (ոչ NFC տարբերակով), բացառությամբ սույն Պայմանների 2.24 և 2.25 կետերով սահմանված դեպքերի:

2.15. Քարտի PIN-կոդ սահմանելու համար հարկավոր է Բանկի բանկոմատի միջոցով կատարել հետևյալ գործողությունները՝

2.15.1. Քարտը մուտքագրել բանկոմատ, որից հետո բանկոմատի էկրանին բացվում է համապատասխան հրահանգներով պատուհան, որում հարկավոր է ընտրել «ակտիվացնել քարտը» հրահանգը, ինչից հետո բացվում է նոր պատուհան՝ sms հաղորդագրության միջոցով ստացված մեկանգամյա կոդը մուտքագրելու համար:

2.15.2. Sms հաղորդագրության միջոցով Քարտապանը ստանում է Բանկի կողմից տրամադրված մեկանգամյա կոդ: Sms հաղորդագրությունն ուղարկվում է այն հեռախոսահամարին, որը Քարտապանը տրամադրել է Բանկին քարտը բացելու ժամանակ և նշել, որ քարտով կատարված գործարքների sms հաղորդագրությունները ուղարկվեն տվյալ հեռախոսահամարին:

2.16. Ստացված մեկանգամյա կոդը հարկավոր է մուտքագրել բանկոմատում բացված համապատասխան պատուհանում:

2.17. Հաղորդագրությունը չստանալու դեպքում, Քարտապանը կարող է մոտենալ Բանկի մասնաճյուղ կամ զանգահարել Բանկ քարտի դարձերեսին նշված հեռախոսահամարներով:

2.18. Եթե Քարտապանի կողմից սխալ է մուտքագրում մեկանգամյա կոդը, բանկոմատի էկրանին հայտնվում է համապատասխան գրառումը և բանկոմատը քարտը դուրս է հանում, որից հետո Քարտապանը պետք է կրկին կատարի սույն Պայմանների 2.15.1 ենթակետում նշված գործողությունները:

2.19. Մեկանգամյա կոդը սխալ մուտքագրելու դեպքում տվյալ կոդը համարվում է անվավեր և Բանկի կողմից ուղարկվում է նոր կոդ:

2.20. Մի քանի անգամ մեկանգամյա կոդը սխալ հավաքելու դեպքում քարտը չի բլոկավորվում: Կոդը կարող է հավաքվել անսահմանափակ քանակությամբ:

2.21. Եթե մեկանգամյա կոդը ճիշտ է մուտքագրված, ապա բանկոմատի վրա բացվում է նոր պատուհան՝ Քարտապանի կողմից մտածված նոր ՊԻՆ-կոդն երկու անգամ մուտքագրելու համար:

2.22. ՊԻՆ-կոդի սահմանումը բարեհաջող ավարտվելուց հետո քարտի կարգավիճակը փոխվում է՝ ստանալով ակտիվ կարգավիճակ, ինչի վերաբերյալ Քարտապանը ստանում է sms հաղորդագրություն:

2.23. ՊԻՆ-կոդի սահմանման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի դեպքում Քարտապանը կարող է զանգահարել քարտի դարձերեսին նշված հեռախոսահամարներով:

2.24. Անանուն նվեր քարտերի դեպքում ՊԻՆ-կոդն ուղարկվում է sms հաղորդագրությամբ՝ Քարտապանի կողմից նվեր քարտի ակտիվացման ժամանակ մուտքագրված հեռախոսահամարին:

2.25. UNIMobile բջջային հավելվածի օգտատերերը կարող են սահմանել PIN-կոդը նաև հավելվածում, ինչից հետո պետք է պարտադիր կատարվի գործարք բանկոմատի կամ ՊՈՍ տերմինալի միջոցով:

2.26. ՊԻՆ-կոդը հայտնի է միայն Քարտապանին և այն մոռանալու կամ կորցնելու դեպքում քարտը Քարտապանի դիմումի դիման վրա վերաթողարկվում է և Քարտապանին տրամադրվում է նոր քարտ՝ նոր ՊԻՆ-կոդով: Սույն կետը կիրառելի է միայն ՊԻՆ-կոդով թողարկվող քարտերի դեպքում:

2.27. Քարտապանը կարող է քարտի գործողության ընթացքում իր հայեցողությամբ փոխել ՊԻՆ-կոդը՝ համապատասխան հնարավորությամբ բանկոմատի կամ UNIMobile հավելվածի

միջոցով: Բանկումատի միջոցով ՊԻՆ-կոդի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող և նոր ՊԻՆ-կոդերը:

2.28. ՊԻՆ-կոդը մոռանալու դեպքում քարտի վերաթողարկում չի պահանջվում, Քարտապանը կարող է ինքնուրույն փոփոխել կամ վերասահմանել այն UNIMobile հավելվածի միջոցով՝ Բանկի կողմից սահմանված կարգով:

2.29. Քարտի վավերականության ժամկետը նշվում է քարտի դիմերեսին կամ դարձերեսին՝ (աա/տտ (ամիս/տարի) ֆորմատով: Քարտը վավեր է մինչև նշված տարվա նշված ամսվա վերջին օրացուցային օրը ներառյալ:

2.30. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և ժամկետը լրանալուց հետո այն պետք է վերադարձվի Բանկ՝ ոչնչացման նպատակով:

2.31. Քարտի գործողության ժամկետն երկարաձգելու համար քարտի ժամկետը լրանալուց, Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի համապատասխան դիմում, վճարելով Քարտի վերաթողարկման համար, համաձայն Բանկում գործող սակագների:

ԳԼՈՒԽ 3. ԼՐԱԳՈՒՑԻՉ ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

3.1. Քարտապանը (հիմնական քարտապան) կարող է իր քարտին (հիմնական քարտ) կից Բանկից ստանալ լրացուցիչ քարտ(եր) ինչպես իր համար, այնպես էլ երրորդ անձի համար՝ համապատասխան դիմումի հիման վրա:

3.2. Լրացուցիչ քարտով կատարվող գործարքները հաշվառվում և արտացոլվում են հիմնական քարտի քարտային հաշվում:

3.3. Լրացուցիչ քարտը կարող է տարբեր լինել հիմնական քարտի տեսակից, սակայն պետք է քարտի դասով լինի հիմնական քարտին հավասար կամ ավելի ցածր դասի:

3.4. Հիմնական քարտապանը յուրաքանչյուր լրացուցիչ քարտի համար կարող է սահմանել առանձին ամսական վճարային սահմանաչափ:

3.5. Հիմնական քարտով և լրացուցիչ քարտ(եր)ով կատարված գործարքների հանրագումարը չպետք է գերազանցի հիմնական քարտի համար սահմանված վճարային սահմանաչափը:

3.6. Հիմնական և լրացուցիչ քարտերով իրականացված բոլոր գործարքների արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները հանդիսանում են հիմնական քարտապանի պարտավորությունները:

3.7. Քարտապանն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել կան ժամանակավոր կասեցնել լրացուցիչ քարտը՝ ներկայացնելով համապատասխան գրավոր դիմում:

3.8. Լրացուցիչ քարտապան(ներ)ը պարտավորվում է(են) տեղեկացնել Բանկին Հիմնական քարտապանի մահվան, անգործունակության, անվճարունակության կամ սնանկության դեպքերում և չօգտագործել քարտը նման տեղեկատվություն ունենալու դեպքում:

ԳԼՈՒԽ 4. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

4.1. Քարտով իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները.

1) կանխիկի մուտքագրում՝ քարտով կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, ինչպես նաև Բանկում,

2) կանխիկի ելքագրում՝ քարտով կանխիկի ելքի հնարավորություն ունեցող բանկումատի, ՊՈՍ տերմինալի միջոցով,

3) քարտից քարտ փոխանցում՝ Բանկի բջջային հավելվածի միջոցով,

4) անկանխիկ եղանակով վճարում ապրանքների և ծառայությունների դիմաց՝ Սպասարկողների մոտ, ներառյալ՝ ինտերնետ միջավայրում:

4.2. Բանկի բանկումատները սպասարկում են բանկումատի վրա պատկերված լոգոտիպով քարտային վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտերը (ArCa, MasterCard, Visa):

4.3. Բանկի քարտերով վճարումներ կարող եք կատարել ArCa, MasterCard և Visa քարտերով՝ վճարման դաշտում համապատասխան լոգոտիպը նշված լինելու դեպքում:

4.4. Բանկի կողմից թողարկված ArCa տեղական քարտերով հնարավոր է անկանխիկ և կանխիկ գործարքներ իրականացնել միայն ՀՀ տարածքում, իսկ միջազգային քարտերով՝ նաև արտերկրում:

4.5. Քարտից քարտ փոխանցումը Բանկի բջջային հավելվածի միջոցով քարտին հասանելի է դառնում, որպես կանոն, մինչև հինգ րոպեի ընթացքում:

4.6. Բանկի դրամարկղում քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև Բանկի հաշվից քարտին փոխանցումը քարտի վրա և այլ բանկերից քարտից քարտ փոխանցումները քարտին հասանելի են դառնում, որպես կանոն, մինչև հինգ րոպեի ընթացքում (Բանկի պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

4.7. Գործարքի գումարը քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում հաշվառվում է, որպես կանոն, հետևյալ ժամկետներում՝

1) ՀՀ տարածքում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,

2) ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների դեպքում 15 օրացուցային օրվա ընթացքում:

4.8. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին ժամանակային խզումով կամ ուշացմամբ հասանելի դառնալու կամ ուշացմամբ ակտիվանալու համար, մասնավորապես՝ տեխնիկական խնդիրների պատճառով:

4.9. Քարտով կանխիկի ստացման օրական գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում են Բանկի սակագներով: Սահմանված սահմանաչափը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում:

4.10. Բանկի բանկոմատների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 800 հազար ՀՀ դրամը:

4.11. Անկանխիկ մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել Բանկի Սակագներով տվյալ քարտատեսակի համար սահմանված սահմանաչափը:

4.12. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել քարտով գործարքների իրականացումը մինչև առաջացած խնդրի պարզաբանումը հետևյալ դեպքերում՝

1) եթե Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության կամ հնարավոր զեղծարարության վերաբերյալ,

2) եթե Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ,

3) եթե Քարտապանը խախտել է պայմանագրի/դիմում-պայմանագրի և սույն Պայմանների դրույթները և պահանջները:

4.13. Ցանկացած գործարք, որը ճանաչվում է Քարտապանի քարտի միջոցով կատարված գործարք, հանդիսանում է Քարտապանի պարտավորությունը:

4.14. Քարտով կատարված գործարքը և գործարքի չեղարկումն ու տվյալ գործարքի գումարի վերադարձը տարբեր գործարքներ են, որոնք արտացոլվում են քարտային հաշվի քաղվածքում:

ԳԼՈՒԽ 5. ՄՆԱՑՈՐԴԻ ՀԱՐՑՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Բանկի բանկոմատների միջոցով քարտապանին հասանելի է մնացորդի հարցման ծառայությունը:

5.2. Մնացորդի հարցման ծառայությունը կարող է հասանելի չլինել այլ բանկերի բանկոմատներից օգտվելիս:

ԳԼՈՒԽ 6. ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

6.1. Թվային քարտը դա բանկային քարտ է՝ առանց պլաստիկ կրիչի: Թվային քարտը հնարավոր չէ կորցնել կամ վնասել:

6.2. Բանկի մոբայլ հավելվածում կարող եք ստեղծել Visa թվային քարտ՝ ընտրելով դիզայնը և արժույթը: Քարտի բոլոր տվյալները՝ համարը, գործողության ժամկետը և CVC2/CVV2 կոդը, գտնվում

են քարտապանի մոբայլ հավելվածում: Փաստացի դրանք հանդիսանում են առանձին վավերապայմաններ, որոնց միջոցով կարելի է կատարել առցանց գնումներ:

6.3. Թվային քարտով կարելի է իրականացնել փոխանցումներ, կանխիկ և անկանխիկ գործարքներ ինչպես օնլայն, այնպես էլ ռեալ միաջավայրում՝ կցելով քարտը Apple Pay և Google Pay համակարգերում:

6.4. Թվային քարտով իրականացվող գործառնությունների արտացոլման նպատակով Քարտապանի անվամբ բացվում է քարտային հաշիվ:

ԳԼՈՒԽ 7. ՔԱՐՏԻ ԹՈՔԵՆԱՑՈՒՄ ԵՎ ՄՈՐԱՅԼ (NFC) ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

7.1. Մոբայլ (NFC) վճարումները Բանկի բջջային հավելվածի (այսուհետ սույն գլխում՝ Հավելված) կամ մոբայլ սարքի վրա տեղադրված այլ ընկերության կողմից տրամադրվող համակարգի (Apple Pay, Google Pay) (այսուհետ սույն գլխում՝ Համակարգ) միջոցով անհայում վճարումներ են, որոնց իրականացման համար անհրաժեշտ է Հավելվածում կամ Համակարգում կցել քարտը՝ ստեղծելով քարտի թոքենացված համարժեքը (այսուհետ՝ թոքենացված քարտ):

7.2. Թոքենիզացված քարտերով վճարում հնարավոր է կատարել բոլոր այն առևտրի/սպասարկման կետերում, որտեղ տեղադրված են առանց հպման սպասարկող [ՊՈՍ](#) տերմինալներ: Թոքենիզացված քարտով կատարված վճարումները հավասարազոր են ֆիզիկապես քարտով կատարված գործարքներին:

7.3. Մեկ սարքի վրա (բջջային հեռախոս, պլանշետ, սմարտ ժամացույց) տեղադրված Հավելվածում կամ Համակարգում կարող է թոքենացվել ինչպես մեկ քարտ, այնպես էլ միաժամանակ՝ մեկից ավել քարտեր:

7.4. Հաճախորդը միևնույն քարտը կարող է թոքենացնել տարբեր մոբայլ սարքերի վրա տեղադրված Հավելվածներում կամ Համակարգերում:

7.5. Հավելվածը և Համակարգը գործում է, իսկ Հավելվածում քարտի թոքենացումը հնարավոր է բացառապես այն դեպքում, եթե Քարտապանի կողմից կիրառվող սարքն ունի ապաբլոկավորման ակտիվացված պաշտպանիչ որևէ հնարավորություն (մատնահետք, դեմքով նույնականացում (Face ID) կամ PIN կոդ):

7.6. Հավելվածը գործում է IOS և Android օգտատերերի՝ համապատասխանաբար IOS և Android օպերացիոն համակարգերով սարքերի համար, որոնք ունեն NFC տեխնոլոգիայի կիրառման հնարավորություն:

7.7. Թոքենացնել կարելի է միայն Բանկի կողմից թողարկված Visa քարտերը (բացառությամբ Visa Business տեսակի քարտերի):

7.8. Մինչև քարտի թոքենացումը Հավելվածում կամ Համակարգում Քարտապանը պարտավոր է համոզվել, որ իր կողմից կիրառվող սարքում կամ Հավելվածում գրանցված են միայն Քարտապանի կենսաչափական նույնականացման տվյալները (մատնահետք, դեմքով նույնականացում PIN կոդ), քանի որ միայն վերջիններս են հաշվի առնվելու թոքենացված քարտով կատարվող գործարքների հաստատման համար:

7.9. Եթե Հավելվածում նույնականացման համար կամ կիրառվող սարք մուտք գործելու կամ Հավելվածում կամ Համակարգում գործարքներ իրականացնելու համար կիրառվում են այլ անձի կենսաչափական տվյալներ (մատնահետք, դեմքով նույնականացում PIN կոդ), ապա վերջիններս համարվելու են Քարտապանի նույնականացման կենսաչափական տվյալներ, իսկ կատարված գործարքների համար ողջ պատասխանատվությունը կրելու է Քարտապանը: Քարտապանը պարտավոր է ապահովել իր նույնականացման (աուտենտիֆիկացման) տվյալների պահպանումն երրորդ անձանց համար անհասանելի վայրում:

7.10. Քարտապանի կողմից կիրառվող սարքը կորցնելու, նույնականացման (աուտենտիֆիկացման) կամ թոքենացված քարտի տվյալները գողանալու կամ այլ անձանց հասանելի դառնալու դեպքում թոքենացված քարտի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ: Ընդ որում, նշված պահանջը չկատարելու դեպքում թոքենացված քարտերով կատարված գործարքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

7.11. Եթե քարտը բլոկավորված է, ապա այն հնարավոր չէ թոքենացնել:

7.12. Ֆիզիկական քարտը բլոկավորելու դեպքում այդ քարտի թոքենացված քարտով գործարք հնարավոր չէ իրականացնել, բացառությամբ այն դեպքերի, երբ Քարտապանը բջջային հավելվածով կամ հեռախոսագանգի միջոցով քարտի կարգավիճակը սահմանում է <<կորած>>:

7.13. Մոբայլ (NFC) վճարումները կարող են իրականացվել աշխարհի բոլոր առևտրի կետերում, որտեղ սպասարկվում են համապատասխան վճարահաշվարկային համակարգի քարտեր և որտեղ տեղադրված են անհայտ սպասարկող ՊՈՍ տերմինալներ:

7.14. Քարտապանի կողմից թոքենացված քարտի բլոկավորման դեպքում ֆիզիկական քարտը չի բլոկավորվում:

7.15. Սույն պայմանների թոքենացված քարտին վերաբերող դրույթները կիրառվում են միայն Քարտապանի կողմից քարտի թոքենացման և թոքենացված քարտի կիրառման առումով: Քարտապանի կողմից կիրառվող սարքի և Համակարգի մատակարարը, բջջային օպերատորը և Համակարգին միացված այլ կայքերը և ծառայություն մատուցող երրորդ անձինք ունեն իրենց սեփական պայմանագրերը և պայմանները, որոնց Քարտապանը պետք է հետևի և միայն այդ պայմանների և պայմանագրերով սահմանված կարգավորումների ընդունելի լինելու պարագայում այդ անձանց տրամադրի անձնական տվյալներ, օգտվի դրանց ծառայություններից կամ այցելի համապատասխան կայքեր:

7.16. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից կիրառվող սարքի և Համակարգի մատակարարի կամ երրորդ կողմի ծառայությունների անվտանգության, ճշտության, օրինականության, կիրառելիության և դրանց աշխատանքի անխափանության և կիրառության որևէ այլ հարցի հետ կապված:

7.17. Քարտապանը պարտավոր է մինչև Համակարգում քարտի թոքենացումը ծանոթանալ ներգրավված երրորդ անձանց հետ պայմանագրերի պայմաններին:

7.18. Բանկը պատասխանատվություն չի կրում և չի տրամադրում օժանդակություն երրորդ կողմի ցանկացած ապարատային և ծրագրային (ներառյալ՝ կիրառվող սարքի և դրա վրա տեղադրված համակարգի), ինչպես նաև այլ պրոդուկտների և ծառայությունների հետ կապված: Երրորդ կողմի պրոդուկտների և ծառայությունների, վերջիններիս տրամադրված անձնական տվյալների հետ կապված խնդիրներ կամ հարցեր առաջանալու դեպքում Քարտապանը պարտավոր է դիմել անմիջապես երրորդ կողմին՝ անհրաժեշտ օժանդակություն կամ օգնություն ստանալու նպատակով: Համակարգի օգտագործման հետ կապված հարցեր առաջանալու դեպքում (բացառությամբ թոքենացված քարտի հետ կապված խնդիրների) Քարտապանը պարտավոր է դիմել անմիջապես այդ Համակարգի սպասարկման ծառայություն:

7.19. Թոքենացված քարտին հասանելիությունը, դրա կիրառումը և սպասարկումը կախված են Համակարգի կամ բջջային ծառայության օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ծավալից: Բանկը չի հանդիսանում Համակարգի ծառայությունների կամ ցանցի օպերատոր և չի վերահսկում վերջիններիս գործողությունները: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի առջև ցանկացած հանգամանքի համար, որը կարող է ընդհատել, խոչընդոտել կամ այլ կերպ անդրադառնալ թոքենացված քարտի օգտագործման վրա, խաթարել նշված քարտով գործարքների կատարման ընթացքը, այդ թվում՝ Համակարգի կամ բջջային կապի անհասանելիության, հեռահաղորդակցության, ցանցի դանդաղության, բջջային կապի ծածկույթի սահմանափակման, կապի խափանումների և ընդհատումների դեպքում:

7.20. Թոքենացված քարտի օգտագործումն ենթադրում է անձնական տվյալների էլեկտրոնային փոխանցում երրորդ կողմի կապի միջոցով: Քանի որ Բանկը չի հանդիսանում նման կապի շահագործող կամ վերահսկող, Բանկը չի կարող երաշխավորել տվյալների այդպիսի փոխանցման գաղտնիությունը կամ անվտանգությունը: Բացի այդ, Քարտապանի կողմից կիրառվող սարքը նախապես կարգաբերված է բջջային կապի օպերատորի կողմից:

7.21. Սույն պայմանների ու կանոնների ակցեպտավորմամբ Քարտապանն իր համաձայնությունն է տալիս ստանալ Բանկից կամ Համակարգի մատակարարից Հավելվածի կամ Համակարգի ծառայությունների կարգավիճակի մասին ծանուցումներ հետևյալ կապի միջոցներով՝ էլեկտրոնային փոստի հասցե, կարճ հաղորդագրություն (sms), push ծանուցումներ, Հավելվածի կամ Համակարգի ծանուցման հնարավորություններ:

Google Pay™ վճարումներ

Google Pay™-ի միջոցով կարող եք արագ, հեշտ և անվտանգ վճարումներ կատարել Android համակարգով աշխատող հեռախոսներով և Wear OS ժամացույցներով:

Ինչպե՞ս կցել քարտը Google Wallet-ին UNIMobile հավելվածում

- Մուտք գործեք UniMobile հավելվածի «Քարտեր» բաժինը
- Ընտրեք ձեր նախընտրած VISA քարտը
- Սեղմեք «Add to Google Pay» կոճակը
- Սեղմեք «Շարունակել»
- Ծանոթացեք և ընդունեք պայմանները

Ինչպե՞ս կցել Յունիբանկի VISA քարտը Google Wallet-ին

- Ներբեռնեք Google Wallet հավելվածը Google Play-ից և մուտք գործեք
- Սեղմեք «Ավելացնել քարտը»՝ հետևելով հրահանգներին
- Լրացրեք քարտի տվյալները
- Ծանոթացեք և ընդունեք պայմանները
- Մուտքագրեք SMS հաղորդագրությամբ ստացված ծածկագիրը:

Ինչպե՞ս կատարել վճարում

Խանութներում սմարտֆոնով

- Ապաքլոկավորել հեռախոսի էկրանը
- Մոտեցնել հեռախոսը տերմինալին
- Սպասել հաստատման նշանին

Խանութներում սմարթ ժամացույցով

- Մուտք գործել **Google Wallet** հավելված
- Մոտեցնել ժամացույցը տերմինալին
- Սպասել հաստատման նշանին
- Google Pay-ով գնումներ կարելի է կատարել աշխարհի ցանկացած կետում, եթե գործարքը

կատարելիս տեսնում եք հետևյալ նշաններից մեկը՝



Առցանց

- Վճարումը կատարելիս սեղմել **Google Pay** կոճակը
- Անհրաժեշտության դեպքում մուտքագրել առաքման հասցեն
- Հաստատել պատվերը

Google Pay-ով առցանց գնումներ կարելի է կատարել, եթե տեսնում եք այս կոճակը՝

Pay with Google Pay

Թվայնացված քարտերով Google Pay-ով Հայաստանում ՀՀ դրամով կատարված վճարումները համարվում են ներքին գործարքներ: Ուստի վճարման՝ ՀՀ դրամով գումարը քարտային հաշվից ելքագրվելու է միայն ՀՀ տարածքում գտնվող սպասարկման և կանխիկացման կետում վճարված գումարի չափով:

Apple Pay վճարումներ

Ինչպե՞ս կցել քարտը Apple Pay-ին

- Մուտք գործեք UniMobile հավելվածի «Քարտեր» բաժինը
- Ընտրեք ձեր նախընտրած Visa քարտը
- Սեղմեք «Ավելացնել Apple Wallet/Add to Apple Wallet» կոճակը
- Սեղմեք «Շարունակել»

- Ծանոթացեք և ընդունեք պայմանները

Գործընթացի ավարտին Դուք կստանաք հաղորդագրություն, որ ձեր քարտը կցված է Apple Wallet-ին:

Ինչպե՞ս կցել քարտը Apple Wallet-ում

Apple Pay-ը կարգավորելը շատ հեշտ է: Բավական է պարզապես մտնել iPhone-ում առկա Wallet հավելվածը և հետևել ցուցումներին՝ Յունիբանկի Visa քարտն ավելացնելու համար:

Եվ այսպես՝

- iPhone սմարթֆոնում մուտք գործեք Apple Wallet
- Սեղմեք վերևի աջ անկյունի «+» նշանը
- Մուտքագրեք ձեր քարտի համարը կամ սկանավորեք քարտը տեսախցիկի միջոցով
- Մուտքագրեք քարտի ժամկետը և CVV եռանիշ կոդը
- Ծանոթացեք և ընդունեք պայմանները, անցում կատարեք առաջ և ստացեք սմս հաղորդագրություն, որն ավտոմատ կերպով կմուտքագրվի համակարգ:

Գործընթացի ավարտին Դուք կստանաք հաղորդագրություն, որ ձեր քարտը կցված է Apple Wallet-ին:

Ինչպե՞ս կատարել վճարում

Խանութներում սմարտֆոնով

- Անհրաժեշտ է 2 անգամ սեղմել iPhone-ի աջ վերևի կոճակին
- Նույնականացվել FaceID-ով/TouchID-ով կամ հավաքել սմարթֆոնի Passcode-ը
- Սմարթֆոնը մոտեցնել տերմինալին
- Սպասել հաստատման նշանին

Խանութներում սմարթ ժամացույցով

- Անհրաժեշտ է 2 անգամ սեղմել «Apple Watch» -ի աջ ներքևի կոճակին
- Մոտեցնել ժամացույցը տերմինալին
- Սպասել հաստատման նշանին

Apple Pay-ով գնումներ կարելի է կատարել կետում, եթե գործարքը կատարելիս տեսնում եք   աշխարհի ցանկացած հետևյալ նշաններից մեկը՝

Առցանց

- Վճարումը կատարելիս սեղմել **Apple Pay** կոճակը
- Անհրաժեշտության դեպքում մուտքագրել առաքման հասցեն
- Հաստատել պատվերը

Apple Pay-ով առցանց գնումներ կարելի է կատարել, եթե տեսնում եք այս կոճակը՝



Թվայնացված քարտերով Apple Pay-ով Հայաստանում ՀՀ դրամով կատարված վճարումները համարվում են ներքին գործարքներ: Ուստի վճարման՝ ՀՀ դրամով գումարը քարտային հաշվից ելքագրվելու է միայն ՀՀ տարածքում գտնվող սպասարկման և կանխիկացման կետում վճարված գումարի չափով:

ԳԼՈՒԽ 8. PIN-ԿՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄՈՐԱՅԼ (NFC) ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

8.1. ՀՀ տարածքում բանկային քարտերով Սպասարկողների մոտ NFC վճարումներ կատարելիս PIN-կոդը մուտքագրվում է, եթե գործարքի գումարը գերազանցում է 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, բացառությամբ թոքենների միջոցով (Apple Pay և Google Pay) գործարքների դեպքում, որոնք իրականացվում են առանց PIN-կոդի մուտքագրման:

8.2. Արտերկրում գտնվող Սպասարկողների մոտ միջազգային քարտերով NFC վճարումներ կատարելիս PIN-կոդի մուտքագրման վերին սահմանաչափը սահմանվում է տվյալ երկրում գործող իրավական նորմատիվ ակտերով, որը չի վերահսկվում միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից:

8.3. ԱՄՆ և Ֆրանսիայի տարածքում բանկային քարտերով NFC վճարումներ կատարելիս PIN-կոդի մուտքագրման սահմանաչափ չի նախատեսվում, ուստի նմանատիպ գործարքների իրականացման անվտանգության ապահովման նպատակով Բանկը կիրառում է իր կողմից թողարկված քարտերի համար հետևյալ վերին սահմանաչափերը՝

1) Visa Classic, Visa Gold, Visa Business, MasterCard Standard, MasterCard Gold տեսակի քարտերի համար՝ 150 ԱՄՆ դոլար կամ եվրո,

2) Visa Signature, Visa Infinite, Mastercard World, Mastercard World Travel, Mastercard World Elite տեսակի քարտերի համար՝ 250 ԱՄՆ դոլար կամ եվրո:

8.4. Բանկը պատասխանատվություն չի կրում արտերկրում գործող Սպասարկողների կողմից որևէ սահմանաչափի կիրառման կամ չկիրառման հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

ԳԼՈՒԽ 9. VISA DIRECT ԵՎ MASTERCARD MONEYSEND ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1. Բանկի կողմից թողարկված Visa (բացառությամբ Visa Business տեսակի քարտերի) և MasterCard քարտերից Դուք կարող եք կատարել փոխանցումներ արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերին՝ օգտագործելով UniMobile հավելվածը:

9.2. MasterCard MoneySend ծառայության միջոցով հնարավոր է կատարել փոխանցումներ Ձեր MasterCard կամ Visa քարտերից արտասահմանյան բանկերի կողմից թողարկված MasterCard քարտերին: Փոխանցումը կատարելու համար անհրաժեշտ է նշել միայն ստացողի անուն, ազգանունը՝ առանձնացնելով բացատով, և քարտի համարը:

9.3. Visa Direct ծառայության միջոցով հնարավոր է կատարել փոխանցումներ Ձեր Visa կամ MasterCard քարտերից արտասահմանյան բանկերի կողմից թողարկված Visa քարտերին: Փոխանցումը կատարելու համար անհրաժեշտ է նշել միայն ստացողի անուն, ազգանունը՝ առանձնացնելով բացատով, և քարտի համարը:

9.4. Visa Direct և MasterCard MoneySend ծառայությունների համար հասանելի երկրների ցանկին կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում:

9.5. Փոխանցումները կարելի է իրականացնել USD և EURO արժույթներով, մեկ գործարքի առավելագույն գումարը կազմում է 2 500 USD և 2 300 EURO:

9.6. Քարտից քարտ փոխանցումների սակագներին ծանոթանալու համար այցելեք Բանկի պաշտոնական կայք՝ **Սակագներ** բաժինը:

ԳԼՈՒԽ 10. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

10.1. Բանկի կողմից թողարկված վճարային քարտերը թույլ են տալիս քարտապաններին իրենց վճարային քարտը (ներառյալ՝ դրա վավերապայմանները) օգտագործել նաև համացանցում (ինտերնետում):

10.2. Վճարային քարտերը (ներառյալ՝ դրանց վավերապայմանները) համացանցում օգտագործվում են 3D Secure անվտանգության համակարգի կիրառմամբ:

10.3. Բանկի կողմից թողարկված քարտերով համացանցում հնարավոր է իրականացնել առանց 3D Secure համակարգի օգտագործման գործարքներ միայն այն դեպքում, երբ սպասարկող կայքը պաշտպանված չէ 3D Secure համակարգով:

10.4. 3D Secure անվտանգության համակարգի կիրառմամբ հնարավոր է կատարել գործարքներ վիրտուալ միջավայրում Բանկի կողմից թողարկվող բոլոր վճարահաշվարկային համակարգերի (ArCa, Visa, MasterCard) վճարային քարտերի միջոցով, եթե քարտապաններն ունեն Բանկում գրանցված բջջային հեռախոսահամար, որի համար պրոցեսինգային կենտրոնում ակտիվացված է SMS հաղորդագրություններ ուղարկելու ծառայությունը և տվյալ քարտատեսակը սպասարկվում է համապատասխան կայքի կողմից:

10.5. Այն հաճախորդները, ովքեր չունեն Բանկում գրանցված բջջային հեռախոսահամար, չեն կարող օգտվել 3D Secure համակարգի միջոցով գործարքներ իրականացնելու հնարավորությունից:

10.6. Համացանցում գործարքներ իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, թույլատրվում է CVC2/CVV2 կոդի մուտքագրումը, որը գտնվում է վճարային քարտի դարձերեսին և բաղկացած է երեք նիշից: Ընդ որում, դա կարող է տեղի ունենալ ինչպես այն դեպքում, երբ սպասարկող կայքը օգտագործում է 3D Secure համակարգը, այնպես էլ այն դեպքում, երբ սպասարկող կայքը այդ համակարգի միջոցով պաշտպանված չէ:

10.7. Ինտերնետ առևտրի կետերում գործարքներ իրականացնելիս՝ քարտապանին խորհուրդ է տրվում հավաստիանալ, որ տվյալ կայքում հրապարակված են Հաճախորդի շահերի պաշտպանության քաղաքականությունը և կազմակերպության կոնտակտային տվյալները (հնարավորության դեպքում դրանք պետք է ստուգել):

10.8. Ինտերնետ միջավայրում վճարային քարտը օգտագործելիս՝ քարտապանը պետք է ուշադրություն դարձնի զննարկիչի (browser) համապատասխան դաշտում «փականի նշանի»

առկայության վրա, որպես օրինակ՝  <https://example.com>

10.9. Secure Sockets Layer (SSL) կամ Secure Web Site գրառումները վկայում են այն մասին, որ միայն քարտապանը և առևտրի կետը հնարավորություն ունեն դիտելու վճարման մանրամասնությունները:

10.10. Համացանցային Սպասարկողների մոտ գործարքների կատարման ժամանակ PIN-կոդի մուտքագրում չի պահանջվում և քարտապանը չպետք է մուտքագրի այն որևէ պատրվակով:

10.11. Համացանցում հաճախակի գործարքներ կատարելիս՝ քարտապանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի իր համակարգչում հակավիրուսային ծրագրերի առկայությանը, քանի որ վիրուսները կարող են տեղեկատվության արտահոսքի պատճառ լինել:

ԳԼՈՒԽ 11. ԱՅԼ ՈՉ ԵՐԵՍ ԱՌ ԵՐԵՍ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

11.1. Այլ, ոչ երես առ երես գործառնությունները, այդ թվում՝ փոստային կամ հեռախոսային պատվերները (Mail Order, Phone Order) իրականացվում են վճարային քարտերի վավերապայմանների կիրառմամբ և քարտապանի կողմից տրված հանձնարարականի հիման վրա:

11.2. Փոստային կամ հեռախոսային պատվերի գործառնությունների դեպքում թույլատրվում է CVC2/CVV2 կոդի և վճարային քարտի այլ վավերապայմանների տրամադրումը (բացառությամբ PIN-կոդի) առևտրի կամ սպասարկման կետին:

11.3. Փոստային կամ հեռախոսային պատվերի գործառնությունների դեպքում PIN-կոդի մուտքագրում չի պահանջվում, և քարտապանը չպետք է տրամադրի այն որևէ պատրվակով:

ԳԼՈՒԽ 12. ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ

12.1. Բանկի պրոցեսինգային կենտրոնն ունի երկու համակարգ՝

1) Front համակարգ՝ որտեղ կատարվում է գործարքների հավաստագրումը,

2) Back-office համակարգ՝ որտեղ կատարվում է դրական պատասխան ստացած հավաստագրումների մշակում՝ քարտային հաշիվներից համապատասխան գումարների ելքագրման նպատակով:

12.2. VISA և MasterCard միջազգային վճարահաշվարկային համակարգերից կողմից գործարքի հավաստագրման պահին Բանկի պրոցեսինգային կենտրոնին ուղարկված հարցումը պրոցեսինգային կենտրոնը ստանում է համապատասխանաբար USD և EUR արժույթներով՝ անկախ գործարքի արժույթից:

Բանկի պրոցեսինգային կենտրոնի Front և Back-office համակարգերում յուրաքանչյուր աշխատանքային օր սահմանվում են արտարժույթի փոխարժեքներ:

12.3. Բանկը թողարկում է վճարային քարտեր, որոնք ունեն մեկ արժույթով հաշիվ (<< դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո կամ ռուսական ռուբլի): Նշված տեսակի քարտերը Բանկի պրոցեսինգի Front համակարգում նույնպես ունեն մեկ արժույթով հաշիվ:

12.4. Բանկը նաև թողարկում է բազմարժույթային քարտեր, որոնք ունեն մի քանի հաշիվ տարբեր արժույթներով՝ << դրամ, ԱՄՆ դոլար ու Եվրո:

12.5. Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կարող են տրամադրվել նաև Visa Classic տեսակի քարտեր երկու արժույթով՝ << դրամ, ռուսական ռուբլի և Visa Infinite տեսակի քարտեր չորս արժույթով՝ << դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ռուսական ռուբլի:

12.6. Բազմարժույթային քարտերը Բանկի պրոցեսինգի Front համակարգում ունեն միայն մեկ հաշիվ՝ << դրամով:

12.7. Անկախ իրականացված գործարքի արժույթից VISA և MasterCard վճարահաշվարկային համակարգերը գործարքի արժույթը վերածում են համապատասխանաբար ԱՄՆ դոլար կամ Եվրո արժույթների:

12.8. VISA և MasterCard վճարահաշվարկային համակարգերից ստացված հարցումներում ԱՄՆ դոլար կամ Եվրո արժույթի վերածված գումարը հավաստագրման պահին Բանկի պրոցեսինգը տվյալ օրը Բանկի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով վերածում է քարտի քարտային հաշվի արժույթի՝ հաշվին միջոցների բավարար լինելը ստուգելու նպատակով:

12.9. Քարտով հնարավոր է կատարել գործարքներ ցանկացած արժույթով:

12.10. << տարածքում գործող բանկերի բանկոմատները տրամադրում են միայն << դրամ, իսկ << տարածքից դուրս՝ տվյալ երկրի իրավական ակտերով սահմանված արժույթով դրամական միջոցներ:

12.11. << տարածքում «Արմենիան Քարդ» վճարահաշվարկային համակարգի անդամ հանդիսացող բանկերի բանկոմատների կամ ՊՈՍ տերմինալների, ինչպես նաև հայաստանյան կայքերի միջոցով կանխիկ և/կամ անկանխիկ գործարքներ իրականացնելու դեպքում, արժույթի փոխարկումը կատարվում է ներքոհիշյալ սկզբունքներով.

1) Քարտային հաշիվների արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքի գումարը փոխարկվում է քարտային հաշվի արժույթի, իսկ բազմարժույթային քարտերի դեպքում՝ այն արժույթի, որով առկա են բավարար դրամական միջոցներ համապատասխան քարտային հաշվին: Բազմարժույթային քարտերի բոլոր երեք հաշիվներին բավարար գումար լինելու դեպքում գումարի գանձումը քարտային հաշիվներից կատարվում է հետևյալ սկզբունքով.

- գումարների գանձման հաշիվների հաջորդականությունն ըստ արժույթների հետևյալն է՝ << դրամ (AMD), ԱՄՆ դոլար (USD), Եվրո (EUR), ռուսական ռուբլի (RUR),

- գումարը գանձվում է նախ քարտապանի սեփական միջոցներից, իսկ սեփական միջոցների անբավար լինելու դեպքում՝ վարկային սահմանաչափի գումարից՝ առկայության դեպքում:

2) Եթե գործարքի արժույթը համապատասխանում է քարտային հաշիվներից որևէ մեկին, ապա համակարգը գործարքի գումարը գանձում է տվյալ արժույթով արտահայտած հաշվի սեփական միջոցներից, իսկ տվյալ արժույթային հաշվին սեփական միջոցների անբավարար լինելու պարագայում՝ գումարի անբավարար մասը գանձվում է մյուս հաշիվներից համաձայն արժույթների հետևյալ առաջնայնության՝ << դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ռուսական ռուբլի: Նշված հաշիվներին սեփական միջոցների անբավարար լինելու դեպքում գանձումն իրականացվում է վարկային սահմանաչափից:

12.12. Գործարքների գումարների փոխարկումը կատարվում է Բանկի կողմից փոխարկման պահին սահմանված փոխարժեքներով:

12.13. Արտերկրում բանկոմատների կամ ՊՈՍ տերմինալների կամ արտասահմանյան կայքերի միջոցով կանխիկ և/կամ անկանխիկ գործարքներ իրականացնելու դեպքում արժույթի փոխարկումը կատարվում է հետևյալ կերպ՝

1) եթե գործարքի արժույթը տարբերվում է քարտային հաշվի արժույթից, ապա Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերից ստացված ներկայացման գումարը, որը համապատասխանաբար արտացոլված է ԱՄՆ դոլարով և Եվրոյով՝ Բանկը փոխարկում է ՀՀ դրամի և գանձում է համապատասխան քարտային հաշվից (բազմարժույթային քարտերի դեպքում գանձումը կատարվում է քարտային հաշիվներից ըստ արժույթների առաջնայնության՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ռուսական ռուբլի):

2) Եթե գործարքի արժույթը ԱՄՆ դոլար է կամ Եվրո, ապա Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերից ստացված ներկայացման գումարը, որը համապատասխանաբար արտացոլված է ԱՄՆ դոլարով և Եվրոյով՝ Բանկը գանձում է համապատասխան քարտային հաշվից: Բազմարժույթային քարտերի դեպքում տվյալ արժույթով արտահայտված հաշվին բավարար միջոցներ չլինելու դեպքում գումարի անբավարար մասը փոխարկվում է այն փոխարժեքի, որով կան բավարար միջոցներ քարտային հաշվին և գանձվում է համապատասխան հաշվից:

12.14. Գործարքների գումարների փոխարկումը կատարվում է Բանկի կողմից պրոցեսինգային կենտրոնի համար սահմանված փոխարժեքներով: Բանկի կողմից պրոցեսինգային կենտրոնի համար սահմանված փոխարժեքները կարող են տարբերվել Բանկի հրապարակված փոխարժեքներից:

12.15. Գործարքի կատարման և հաշվանցման օրերը տարբեր են, ուստի Բանկի կողմից պրոցեսինգային կենտրոնի համար սահմանված փոխարժեքի փոփոխման հետևանքով քարտային հաշվին կարող է առաջանալ գերաժախս (օվերլիմիտ), որի գծով ձևավորվում են պարտավորություններ: Փոխարժեքների տարբերությունից քարտապանի մոտ առաջացող հնարավոր վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

ԳԼՈՒԽ 13. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

13.1. Վճարային քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ իրականացված գործարքի հետ խնդիրների առաջացման կամ դրա վերաբերյալ անհամաձայնություն ունենալու դեպքում Քարտապանը կարող է դիմել Բանկին գործարքի բողոքարկման համար, եթե խնդիրն անմիջապես Սպասարկողի հետ լուծելու բոլոր հնարավոր միջոցներն ու տարբերակները սպառված են:

13.2. Քարտային գործարքի բողոքարկման դիմումը կարող է ներկայացվել ոչ ուշ, քան տվյալ գործարքը ներառող ամենամսյա պարբերականությամբ քաղվածքի ստացման ամսաթվից **60 (վաթսուն)** օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում գործարքների դիմաց բողոքարկում չիրականացնելու դեպքում գործարքները համարվում են Քարտապանի կողմից ընդունված և այլևս բողոքարկման ենթակա չեն:

13.3. Գործարքն ենթակա է բողոքարկման միայն դրա հաշվանցումից հետո:

13.4. Կատարված գործարքի չեղարկումից հետո Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել բողոքարկման դիմում, եթե չեղարկված գործարքի գումարը չի վերադարձվել տվյալ Սպասարկողի կողմից սահմանված ժամկետում կամ հետևյալ ժամկետներում.

1) ՀՀ տարածքում կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից **15** (տասնհինգ) օր,

2) ՀՀ տարածքից դուրս կատարված գործարքների համար՝ չեղարկման օրվանից **40** (քառասուն) օր:

13.5. Գործարքի բողոքարկման նպատակով Քարտապանը՝ բողոքարկվող գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերով դիմում է Բանկի գլխամասային գրասենյակի սպասարկման սրահ կամ մասնաճյուղ և ստորագրում քարտային գործարքի բողոքարկման դիմումը:

13.6. Եթե Քարտապանը ցանկանում է բողոքարկել գործարքը որպես զեղծարար գործարք, ապա մինչ Բանկի կողմից բողոքարկման գործընթացը սկսելը տվյալ քարտն ենթակա է բլոկավորման, որից հետո այն չի կարող ապաբլոկավորվել:

13.7. Գործարքի բողոքարկումը կարող է մերժվել Բանկի կողմից, եթե Քարտապանը հրաժարվում է տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները և/կամ փաստաթղթերը:

13.8. Գործարքը բողոքարկվում է Քարտապանի կողմից բողոքարկման դիմումի և/կամ Բանկի կողմից պահանջված փաստաթղթերի ներկայացման օրվանից սկսած առավելագույնը **20** (քսան) օրացուցային օրվա ընթացքում:

13.9. Քարտային գործարքի բողոքարկման պատասխանը Բանկը Քարտապանին տրամադրում է հետևյալ ժամկետներում.

1) ArCa վճարահաշվարկային համակարգում կատարված գործարքների դեպքում՝ բողոքարկման պահից 40 (քառասուն) օրվա ընթացքում,

2) Visa, MasterCard միջազգային վճարահաշվարկային համակարգերում կատարված գործարքների դեպքում՝ բողոքարկման պահից 60 (վաթսուն) օրվա ընթացքում,

3) Բանկի բանկոմատներով/Սպասարկողների կետերում տեղադրված տերմինալներով կատարված գործարքների բողոքարկման դեպքում՝ բողոքարկման պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

13.10. Այն դեպքում, երբ գործարքի բողոքարկման ընթացքում սպասարկող բանկը մերժում է հետգանձման դիմումը, Բանկն ուսումնասիրում է սպասարկող բանկի կողմից ներկայացված պատասխանը և տեղեկացնում է Հաճախորդին հետգանձման գործընթացի ավարտի մասին, կամ առաջարկում է դիմել Բանկ՝ բողոքարկման գործընթացի երկրորդ փուլը նախաձեռնելու խնդրանքով, եթե այդպիսին հնարավոր է համապատասխան քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների և ստացված պատասխանի համաձայն:

13.11. Բողոքարկման գործընթացի երկրորդ փուլը սկսելու դեպքում բողոքարկման պատասխանը Քարտապանին տրամադրվում է երկրորդ բողոքարկման պահից **60** (վաթսուն) օրվա ընթացքում:

13.12. Գործարքի բողոքարկումը շարունակելու նպատակով Բանկը Քարտապանից կարող է պահանջել տրամադրել հավելյալ տեղեկատվություն, որը չի տրամադրվել բողոքարկման նախնական դիմումը ներկայացնելիս: Ընդ որում, եթե բողոքարկումը մերժվում է սպասարկող բանկի կողմից, որից հետո Քարտապանը տրամադրում է անհրաժեշտ փաստաթղթեր և/կամ տեղեկատվություն, որոնք հնարավոր էր տրամադրել բողոքարկման առաջին դիմումը ներկայացնելիս, ապա Բանկն իրավունք ունի մերժել Քարտապանի դիմումը և դադարեցնել բողոքարկման գործընթացը:

13.13. Բողոքարկման բացասական պատասխանի դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

13.14. Գործարքը բողոքարկվում և հաստատման դեպքում Քարտապանի հաշվին գումարը վերադարձվում է Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերից ստացված քլիրինգային ֆայլերում ֆիքսված գումարի չափով, որը համապատասխանաբար արտացոլված է ԱՄՆ դոլարով կամ եվրոյով:

13.15. Բանկն իրավունք ունի մերժել բողոքարկման դիմումի կատարումը, եթե՝

1) Քարտապանի կողմից խախտվել են նշված գործարքի բողոքարկման համար սույն Պայմանների 13.2 կետով սահմանված ժամկետները.

2) ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ Քարտապանի կողմից բողոքարկումը հիմնավոր չէ կամ առկա չեն բավարար հիմքեր.

3) բողոքարկում է գործարքի փաստացի կատարման ամսաթվի և գործարքի հաշվանցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում արտարժույթային փոխարժեքների տատանումներից Քարտապանի ստացած ֆինանսական վնասը.

4) գործարքի գումարը հնարավոր չէ վերադարձնել համաձայն տվյալ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոնների և/կամ գործող սահմանափակումների,

5) գործարքը կատարվել է բաժանորդագրության արդյունքում, և բաժանորդագրությունը կասեցնելու նպատակով Քարտապանը չի դիմել Սպասարկողին՝ մինչ բաժանորդագրության գումարի գանձումը,

6) եթե մինչ բողոքարկման դիմում ներկայացնելը Քարտապանը չի դիմել Սպասարկողին՝ խնդիրը կարգավորելու համար (զեղծարար գործարքների և բանկոմատների միջոցով կանխիկացման գործարքների դեպքում սույն դրույթը չի կիրառվում).

7) եթե Քարտապանը հրաժարվում է տրամադրել անհրաժեշտ տեղեկությունները և/կամ փաստաթղթերը:

13.16. Բանկը նաև մերժում է բողոքարկման դիմումի կատարումը, եթե Քարտապանը բողոքարկում է գործարքը որպես զեղծարար գործարք, սակայն՝

1) գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ իր լիազորությամբ (համաձայնությամբ).

2) Քարտապանի կողմից խախտվել են վճարային քարտերով գործառնությունների իրականացման անվտանգության կանոնները կամ պայմանագրով/դիմում-պայմանագրով սահմանված դրույթները, որոնց հետևանքով ի հայտ են եկել Քարտապանի կողմից չվավերացված գործարքները, այդ թվում իր կողմից քարտի տվյալների, և/կամ առցանց հարթակների, հավելվածների մուտքային տվյալների, գաղտնաբառերի և/կամ անձնական անվտանգային տվյալների երրորդ անձին տրամադրման կամ կեղծ կայքում մուտքագրելու արդյունքում.

3) գործարքը կատարվել է PIN-կոդի կիրառմամբ.

4) գործարքը կատարվել է գործարքի հաստատման համար անհրաժեշտ 3D Secure մեկանգամյա գաղտնաբառի մուտքագրմամբ կամ բիոմետրիկ տվյալների կիրառմամբ.

5) գործարքը կատարվել է Apple Pay/Google Pay թոքենացված քարտի միջոցով.

6) գործարքը կատարվել է անհպում (contactless) տեխնոլոգիայի կիրառմամբ.

7) գործարքը կատարվել է Քարտապանի կողմից տվյալ Սպասարկողի մոտ արդեն իսկ կցված քարտից կատարված բաժանորդագրության համար,

8) գործարքը կատարվել է Բանկի մոբայլ հավելվածում Քարտապանի կողմից ձևավորված անցակոդի, մատնահետքի կամ FaceID ծրագրի կիրառմամբ.

9) կատարվել է կանխիկացման գործարք բանկոմատի կամ ՊՈՍ տերմինալի միջոցով:

13.17. Գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

13.18. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից կարող է գանձվել Բանկի սակագներով սահմանված վճար:

13.19. Բողոքարկման բացասական պատասխանի դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

13.20. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից կատարված սխալ վավերապայմաններով քարտից քարտ փոխանցումների համար: Տվյալ դեպքում Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

ԳԼՈՒԽ 14. SMS ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

14.1. Քարտապանը կարող է ակտիվացնել sms հաղորդագրությունների ծառայությունը համապատասխան դիմումի հիման վրա:

14.2. Ծառայության ակտիվացման պահից Քարտապանը ծանուցվում է գործարքների վերաբերյալ՝ դիմումում նշված բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություններ ստանալու միջոցով:

14.3. Նշված ծառայությունը հատկապես կարևոր է վճարային քարտի զեղծարար օգտագործումը կանխելու համար, ինչպես նաև անհրաժեշտ է համացանցում 3D Secure համակարգ գործիքը կիրառող կայքերի միջոցով քարտային գործարքներ կատարելու համար (նշված համակարգը բարձրացնում է անվտանգության մակարդակը համացանցում քարտային գործարքներ կատարելիս):

14.4. Քարտային հաշվի մուտքերի և ելքերի վերաբերյալ sms ծառայությունն ակտիվացված լինելու դեպքում Քարտապանի տրամադրած հեռախոսահամարին ուղարկված sms-ները Քարտապանին Բանկից անկախ հանգամանքներով չհասնելու և չհասնելու հետևանքով

Քարտապանի կրած վնասների կամ ունեցած կորուստների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

14.5. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի բջջային հեռախոսի կամ բջջային կապի խափանման, հեռահաղորդակցման ծառայություններ մատուցող կազմակերպության մոտ ծագած տեխնիկական, ծրագրային կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով, Քարտապանի բջջային հեռախոսահամարի փոփոխության (որի մասին պատշաճ չի տեղեկացվել Բանկին) կամ Քարտապանի ռոումինգում գտնվելու ժամանակ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված sms հաղորդագրությունները չստանալու համար: Քարտապանի հեռախոսը երրորդ անձանց հասանելի դառնալու պարագայում դրանում պահվող տվյալները կամ հեռախոսի միջոցով ձեռքբերվող տեղեկատվությունը բացահայտվելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում:

ԳԼՈՒԽ 15. ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

15.1. Բանկը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ձևով, ժամկետայնությամբ և քարտապանի հետ համաձայնեցված եղանակով քարտապանին տրամադրում է քարտային հաշվի քաղվածքներ (առնվազն 30-օրյա պարբերությամբ): Քաղվածք կարող է չտրամադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

15.2. Քարտային հաշվի քաղվածքը չի ներառում Բանկի կողմից դեռևս չհաշվառված գործարքները, որի հետևանքով հնարավոր է լինի տարբերություն փաստացի կատարված և քաղվածքում ընդգրկված գործարքների մեջ, ինչպես նաև քարտի և քարտային հաշվի մնացորդների մեջ:

ԳԼՈՒԽ 16. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

16.1. Քարտապանը պետք է պահպանի քարտը և ՊԻՆ-կոդն այլ անձանց համար անհասանելի վայրում: Արգելվում է պահել քարտը և ՊԻՆ-կոդը միասին, նշել ՊԻՆ-կոդը քարտի վրա, տեղադրել քարտի նկարը կամ քարտի տվյալները սոցիալական ցանցերում, որևէ այլ եղանակով հայտնի դարձնել քարտի տվյալները կամ PIN-կոդը այլ անձանց:

16.2. Քարտապանը չպետք է վստահի իր քարտն այլ անձանց, նույնիսկ ընտանիքի անդամներին: Նման անհրաժեշտության դեպքում նրանց համար կարելի է Բանկից պատվիրել լրացուցիչ քարտեր:

16.3. Հիշեք, որ որևէ անձ, ներառյալ՝ Բանկի աշխատակցի, չի կարող որևէ պատրվակով պահանջել ձեզնից հայտնել իրեն քարտի ՊԻՆ-կոդը և/կամ CVC2/CVV2 կոդը:

16.4. Բանկը խորհուրդ է տալիս առանց ծայրահեղ անհրաժեշտության չբարձրացնել քարտի հավաստագրման սահմանաչափը, քանի որ այն նվազեցնում է այլ անձանց կողմից քարտի չարտոնված օգտագործման դեպքում հնարավոր կորուստների չափը:

16.5. Քարտապանը վճարումներ կամ կանխիկացում իրականացնելիս՝ չպետք է իր քարտը տրամադրի որևէ այլ անձանց, բացի համապատասխան աշխատակցից (գանձապահից):

16.6. Նաև խորհուրդ է տրվում ունենալ Բանկի կոնտակտային հեռախոսահամարները և Ձեր քարտի համարը այլ կրիչների վրա, օրինակ, նոթատետրում կամ բջջային հեռախոսում: Այդ տվյալները կպահանջվեն քարտի կորստի դեպքում՝ այն արգելափակելու համար:

16.7. Բանկումատի միջոցով գործարք կատարելիս քարտապանը պետք է ուշադրություն դարձնի բանկումատի արտաքին տեսքին, քարտի ընդունման անցքին և ստեղծաշարին: Բանկումատի վրա կամ կողքին տեսախցիկների կամ անսովոր սարքերի առկայության պարագայում մի օգտվեք տվյալ բանկումատից:

16.8. Խորհուրդ է տրվում չօգտվել բանկումատներից մուֆ և ոչ մարդաշատ վայրերում:

16.9. Մի կիրառեք ֆիզիկական ուժ, որպեսզի տեղադրեք քարտը բանկումատում: Եթե քարտը չի տեղադրվում կամ դժվարությամբ է տեղադրվում, ձեռնպահ մնացեք տվյալ բանկումատի օգտագործումից:

16.10. Բանկոմատից օգտվելիս՝ մուտքագրեք PIN-կոդն այնպես, որ այն տեսանելի չլինի այլ անձանց համար: Մերժեք կողմնակի անձանց առաջարկները՝ Ձեզ օգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

16.11. Հիշեք, որ ՊԻՆ-կոդն երեք անգամ անընդմեջ սխալ հավաքելու դեպքում քարտը բլոկավորվում է: Եթե վերջին, երրորդ գործարքը Ձեր կողմից կատարվի բանկոմատի միջոցով, ապա բանկոմատն առգրավվելու է քարտը:

16.12. Բանկոմատի միջոցով գործարք կատարելուց հետո մի մոռացեք վերցնել Ձեր քարտը, այլապես բանկոմատից դուրս գալուն հաջորդող 30 վայրկյանի ընթացքում քարտը կառգրավվի բանկոմատի կողմից:

16.13. Քարտի առգրավման դեպքում բանկոմատի էկրանին հայտնվում է քարտի առգրավման մասին հաղորդագրություն: Քարտի առգրավման դեպքում քարտապանը պետք է անմիջապես հայտնի այդ մասին Բանկին՝ զանգահարելով (+37410) 555 385 հեռախոսահամարով:

16.14. Սպասարկողի մոտ գործարք կատարելիս պարտադիր պահեք քարտը Ձեր տեսադաշտում: Ցանկալի է, որ գործարքներն իրականացվեն քարտապանի ներկայությամբ:

16.15. Գործարքը կատարելուց հետո ստուգեք գործարքի գումարի ճշտությունն անդորրագրի վրա:

16.16. Եթե պարզել եք սխալ գործարք կատարելու փաստը և Ձեզ խոստանում են, որ այն կուղղվի հետագայում, ապա կարող եք հրաժարվել ստորագրել անդորրագիրը:

16.17. Քարտապանը չպետք է ներկայացնի վճարային քարտը վճարման համար կասկածելի վայրերում կամ ինտերնետային կայքերում (օրինակ՝ գիշերային ակումբներում, էրոտիկ և այլ կասկածելի ինտերնետային կայքէջերում): Մասնավորապես, սույն կետը կարևորվում է Արևելյան Եվրոպայի և Ասիայի երկրներ ճանապարհորդելիս:

16.18. Սպասարկողի տարածքում ՊԻՆ-կոդը մուտքագրելիս՝ քարտապանը պարտավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ մուտքագրումը իրականացվի ՊՈՍ տերմինալի կամ դրան կցված ստեղնաշարի վրա: Արգելվում է ՊԻՆ-կոդի մուտքագրումը որևէ այլ կերպով:

16.19. Համացանցում գործարք կատարելիս անհրաժեշտ է հավաստիանալ, որ տվյալ կայքում առկա են կազմակերպության կոնտակտային տվյալներ: Խնդրում ենք օգտվել միայն հայտնի և վստահելի կայքերից: Ուշադրություն դարձրեք զննարկիչի (browser) համապատասխան դաշտում "փականի" նշանի առկայության վրա: Դա նշանակում է, որ Ձեր և կայքի միջև փոխանակվող տվյալները պաշտպանված են չարտոնված միջամտությունից:

16.20. Համացանցում գործարք կատարելիս, ըստ կայքի պահանջի, անհրաժեշտ է համապատասխան դաշտում մուտքագրել քարտի CVC2/CVV2 կոդը, որը գտնվում է քարտի դարձերեսին և բաղկացած է երեք նիշից:

16.21. Համացանցում գործող որոշ կայքեր կիրառում են 3D Secure համակարգը, որը թույլ է տալիս բարձրացնել քարտային գործարքների անվտանգության մակարդակը: Նշված գործիքից օգտվելու համար Բանկի քարտապանները պետք է ակտիվացնեն sms հաղորդագրությունների ծառայությունը, ինչն իրենց թույլ կտա տվյալ կայքում գործարք կատարելու ընթացքում ստանալ հեռախոսահամարին միանվագ կոդ, որն անհրաժեշտ է մուտքագրել կայքի համապատասխան դաշտում:

16.22. Հիշեք, որ համացանցում գործարք կատարելիս որևէ պարագայում ՊԻՆ-կոդը չի պահանջվում, ուստի մի մուտքագրեք այն ոչ մի պատրվակով:

16.23. Բանկը խորհուրդ է տալիս գնումներ կատարել միայն Ձեր համակարգչից՝ անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու նպատակով:

16.24. Տեղադրեք Ձեր համակարգչի վրա հակավիրուսային ծրագրեր և պարբերաբար թարմացրեք դրանք, դա կարող է պաշտպանել Ձեզ վնասակար ծրագրերի ներթափանցումից:

ԳԼՈՒԽ 17. ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԳԵՐԱԾԱԽՍ

17.1. Քարտային հաշվի գերաժախսի համար Բանկի սակագներով կարող է սահմանվել համապատասխան տույժ:

17.2. Քարտային հաշվի գերաժախս կարող է առաջանալ առավելապես հետևյալ իրավիճակներում՝

- **Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների իրականացում**

Այն դեպքում, եթե գործարքի արժույթը տարբերվում է քարտային հաշվի արժույթից, գործարքի գումարն, արտահայտված քարտային հաշվի արժույթով, նվազում է հասանելի դրամական միջոցներից տվյալ պահին Բանկի պրոցեսինգում գործող փոխարժեքով: Հետագայում, գործարքի հաշվանցման օրը, վերահաշվարկը կատարվում է Բանկում գործող առք ու վաճառքի փոխարժեքով, ինչը կարող է առաջացնել քարտային հաշվի գերաժախս:

- **Չհավաստագրված գործարքների իրականացում**

Որոշ առևտրի կետերում գործարքներ իրականացնելիս չի կատարվում հավաստագրում, այսինքն՝ ստուգում, թե՛ արդյոք քարտային հաշվին առկա են բավարար միջոցներ գործարքի իրականացման համար: Դրա հետևանքով չի կատարվում գումարի սառեցում, և չի երևում սառեցված (հավաստագրված), այսինքն՝ քարտապանի կողմից փաստացի օգտագործված գումարը: Սակայն այն, որոշ ժամանակ անց (գործարքի ստացման և հաշվանցման ժամանակ), քարտային հաշվից ելքագրվելուց հետո, հասանելի մնացորդի բացակայության դեպքում, կգոյանա քարտային հաշվի գերաժախս:

- **Տոկոսավճարի կուտակում**

Եթե վճարային քարտին տրամադրվել է վարկային սահմանաչափ, ապա ամսվա որոշակի օրերին՝ համաձայն Բանկի հետ կնքված վարկավորման պայմանագրի, վարկային գծի օգտագործված մասի դիմաց կկուտակվի տոկոսագումար և քարտային հաշվին հասանելի մնացորդի (այդ թվում՝ վարկի չօգտագործված մասի) բացակայության դեպքում կառաջանա վճարային սահմանաչափի գերաժախս:

- **Արտոնյալ սակագներով տրամադրված քարտեր**

Եթե վճարային քարտը թողարկվել է արտոնյալ սակագների շրջանակներում (այդ թվում՝ աշխատավարձային նախագծի ներքո), և Բանկի որոշակի ծառայությունների համար քարտապանին տրամադրվել են արտոնություններ, ապա, Կանոններով նախատեսված դեպքերում հետագայում վճարային քարտի ստանդարտ սակագներով սպասարկվելու դեպքում, որոշակի միջնորդավճարների գանձումը (օրինակ, տարեկան սպասարկման վճար), կարող է բերել քարտային հաշվի գերաժախսի:

- **Այլ միջնորդավճարներ**

Վճարային քարտը օգտագործելիս քարտային հաշվից կարող են գանձվել սակագներով նախատեսված միջնորդավճարներ, այդ թվում՝ քարտի տարեկան սպասարկման վճար, sms հաղորդագրությունների համար վճար և այլ միջնորդավճարներ: Քարտի հասանելի մնացորդի բացակայության պարագայում տվյալ գանձումները կարող են առաջացնել քարտային հաշվի գերաժախս:

- **Վարկային սահմանաչափի նվազեցում**

Եթե հաճախորդը Բանկին ներկայացրել է վարկային սահմանաչափի նվազեցման օֆերտա, որն ակցեպտավորվել է Բանկի կողմից, սակայն մինչև քարտի միջոցով հասանելի վարկային սահմանաչափը նվազեցման դիմումում նշված գումարի չափով նվազեցնելը հաճախորդը քարտի կամ դրա վավերապայմանների կիրառմամբ իրականացրել է այնպիսի գումարի գործարք, որը նրան այլևս հասանելի չէր լինի վարկային սահմանաչափի նվազեցումից հետո կարող է առաջանալ քարտային հաշվի գերաժախս: Ընդ որում, վարկային սահմանաչափի նվազեցման օֆերտան համարվում է Բանկի կողմից ակցեպտավորված օֆերտան Բանկ ներկայացնելուց հետո Բանկի կողմից վերջինիս պայմանները կատարելու ուղղությամբ գործողություններ ձեռնարկելու պահից:

- **Քարտին հասանելի միջոցների օգտագործում մինչ հաշվանցվելը**

Չհաշվանցված մուտքային գործարքների (քարտից քարտ փոխանցման ստացման, գործարքի հետվերադարձի և այլն) դեպքում ելքային գործարքների կատարման արդյունքում ձևավորված գերաժախս:

ԳԼՈՒԽ 18. ՔԱՐՏԻ ԿՈՐՈՒՄՏ, ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

18.1. Քարտի և/կամ PIN-կոդի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին (շուրջօրյա +374 10 55-53-85, +374 10 71 22 22, +374 10 59 55 55, +374 55 02 53 58 /Viber/, +7 958 799 72 94 /Ռուսաստանի Դաշնություն/) հեռախոսահամարներով:

18.2. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Հաճախորդի կողմից ստացված բանավոր կամ գրավոր տեղեկատվության հիման վրա Բանկն անմիջապես կասեցնում (բլոկավորում) է քարտը:

18.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին հասցրած այն վնասի համար, որը կատարվել է քարտը կորցնելու և/կամ զեղծարարության և Բանկ հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում:

18.4. Բանկի կողմից վճարային քարտի կասեցման դեպքում կասեցվում են միայն հավաստագրման ենթակա գործարքները և քարտապանը կարող է ֆինանսական կորուստներ ունենալ այն գործարքների արդյունքում, որոնք ենթակա չեն հավաստագրման:

18.5. Վճարային քարտի օգտագործումն ամբողջովին կասեցնելու համար քարտապանը պարտավոր է Բանկին տեղեկացնել, որ բացի հավաստագրման կասեցումից, ցանկանում է օգտվել նաև Stop-list ծառայությունից:

18.6. Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար և հնարավոր ֆինանսական կորուստները կանխելու համար Քարտապանի համապատասխան գրավոր դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է Stop-list ցանկում:

18.7. Վճարային քարտով հավաստագրումների կասեցումը և Stop-list ցանկում տեղադրումն իրականացվում է համաձայն Բանկի սակագների:

18.8. Վճարային քարտի կորստի կամ հափշտակման դեպքում, հավաստագրումների կասեցում իրականացնելուց և Stop-list ծառայությունից չօգտվելու դեպքում քարտապանը կրում է առանց հավաստագրման իրականացման կատարված բոլոր գործարքների հետևանքով առաջացած բացասական հետևանքների ռիսկն՝ անկախ մեղքի բացակայությունից, իսկ Բանկը պատասխանատվություն է կրում հավաստագրման հարցմամբ իրականացված բոլոր գործարքների համար:

18.9. Վճարային քարտի տեղադրումը և հեռացումը Stop-list ցանկում իրականացվում և վավերացվում է համաձայն տվյալ միջազգային վճարահաշվարկային համակարգի կանոնների:

18.10. Վճարային քարտով հավաստագրումների ապակասեցման (ապաբլոկավորման) և վճարային քարտը Stop-list ցանկից հեռացնելու համար քարտապանը պարտավոր է ներկայացնել Բանկին գրավոր դիմում:

18.11. Վճարային քարտի ապակասեցումն իրականացվում է Բանկի սակագներին համապատասխան՝ **մեկ** աշխատանքային օրվա ընթացքում:

18.12. Քարտապանը պարտավոր է հատուցել քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելն այլ անձանց կողմից քարտի օգտագործման հետևանքով կրած ծախսերը, կորուստները և վնասները:

18.13. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը՝ ստանալով քարտ նոր վավերապայմաններով (քարտի նոր համար, նոր CVC2/CVV2 կոդ):

18.14. Քարտի վերաթողարկումն իրականացվում է համաձայն Բանկի սակագների՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

18.15. Եթե Բանկի կողմից իրականացվող քարտային գործարքների մշտադիտարկման արդյունքում ի հայտ են եկել տվյալ քարտով զեղծարարության իրականացման փորձի դեպք կամ նման կասկածներ, Քարտը կարող է կասեցվել (բլոկավորվել) Բանկի կողմից՝ մինչև առաջացած խնդրի պարզաբանումը:

18.16. Քարտը կասեցնելուց հետո Բանկի աշխատակիցն անմիջապես կապ է հաստատում քարտապանի հետ և պարզում, արդյոք նշված գործարքը կամ գործարքի փորձը կատարվել է քարտապանի կողմից: Դրական պատասխանի դեպքում քարտն անմիջապես ապակասեցվում է:

18.17. Այն դեպքում, եթե քարտապանը հայտնում է, որ նշված գործարքը կամ գործարքի փորձը կատարվել է ոչ իր կողմից, քարտը մնում է կասեցված, իսկ աշխատակիցն ուղղորդում է քարտապանին ներկայացնել Բանկին քարտի վերաթողարկման գրավոր դիմում՝ նոր վավերապայմաններով քարտ ստանալու նպատակով:

18.18. Քարտապանի հետ կապ հաստատելու չհաջողվելու դեպքում քարտը մնում է կասեցված՝ մինչ քարտապանի հետ կապ հաստատելը և նշված գործարքի կամ գործարքի փորձի հանգամանքները պարզելը:

ԳԼՈՒԽ 19. ՔԱՐՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՔԱՐՏԱՊԱՆԻՆ ԲԱՆԿՈՄԱՏՈՒՄ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

19.1. Բանկի համապատասխան աշխատակիցը յուրաքանչյուր օր Բանկի քարտերի սպասարկման համակարգով պարբերաբար ստուգում է բանկոմատները և առգրավված քարտեր հայտնաբերելու դեպքում կազմում է առգրավված քարտերի ցուցակ, որը հաջորդ աշխատանքային օրն առավոտյան տրամադրում է Բանկի համապատասխան ստորաբաժանման աշխատակցին:

19.2. Առգրավված քարտերի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև Քարտապաններից՝ **010-55-53-85** հեռախոսահամարով:

19.3. Բանկի աշխատակիցներն երկու աշխատանքային օրվա ընթացքում առգրավված քարտերը հանում են բանկոմատներից, ինչից հետո Բանկին պատկանող քարտերը հեռախոսազանգի միջոցով Քարտապանի հետ համաձայնեցնելով ուղարկվում են համապատասխան մասնաճյուղեր, իսկ այլ բանկերի քարտերն՝ ԱրՔա պրոցեսինգային կենտրոն:

19.4. Մասնաճյուղ ուղարկված առգրավված քարտը ստանալուց հետո մասնաճյուղի աշխատակիցն **անմիջապես (մեկ աշխատանքային օրվա ընթացքում)** զանգահարում և տեղեկացնում է դրա մասին Քարտապանին:

19.5. Մասնաճյուղերում տեղադրված բանկոմատներից առգրավված քարտերը կարող են հանվել նաև մասնաճյուղի կառավարչի կամ հաճախորդների սպասարկման գծով տեղակալի կողմից: Մասնաճյուղի աշխատակիցն առգրավված քարտը Քարտապանին կարող է տրամադրել՝ քարտի կարգավիճակը ճշտելուց և համոզվելուց հետո, որ քարտը չի առգրավվել գողացված/կորցրած կամ սխալ PIN-կոդ մուտքագրելու պատճառով, ապա Քարտապանին նույնականացնելուց և համապատասխան գրանցամատյանում ստորագրելուց հետո:

19.6. Մասնաճյուղերում տեղադրված բանկոմատներում առգրավված Բանկին պատկանող քարտերը Քարտապաններին տրամադրվում են տվյալ մասնաճյուղում:

19.7. Մասնաճյուղերում տեղադրված բանկոմատներում առգրավված այլ բանկի քարտերը 5-րդ աշխատանքային օրն ուղարկվում են Բանկի գլխամասային գրասենյակ:

19.8. Հրատապ դեպքերում մասնաճյուղերում տեղադրված բանկոմատներում առգրավված այլ բանկի քարտը տրամադրվում է Քարտապանին, եթե քարտը ուղղակի մոռացվել է բանկոմատում կամ առգրավվել է բանկոմատում առկա տեխնիկական խնդրի պատճառով:

19.9. Հրատապ դեպքերում մասնաճյուղերում տեղադրված բանկոմատներում սխալ PIN-կոդ մուտքագրելու պատճառով առգրավված այլ բանկի քարտը տրամադրվում է միայն համապատասխան բանկի կողմից Բանկին տվյալ Քարտապանի նույնականացման համար անհրաժեշտ տվյալներ տրամադրելու դեպքում:

19.10. Այլ բանկի քարտը չի կարող վերադարձվել Քարտապանին, եթե առգրավվել է գողացված կամ PICK UP SPECIAL CONDITIONS կարգավիճակով:

19.11. Ոչ հայաստանյան բանկի կողմից թողարկված քարտի առգրավման դեպքում տվյալ քարտը պարտադիր ուղարկվում է Քարտապանի հաճախորդների սպասարկման բաժին, որի աշխատակիցը պատշաճ նույնականացումից հետո տրամադրում է քարտը Քարտապանին, եթե քարտն ուղղակի մոռացվել է Քարտապանի կողմից բանկոմատում կամ առգրավվել է՝ բանկոմատում առկա տեխնիկական խնդրի պատճառով:

19.12. Այլ պատճառներով բանկոմատի կողմից առգրավված արտասահմանյան քարտը Քարտապանին չի վերադարձվում և ոչնչացվում է քարտի առգրավման օրվանից մեկ ամիս հետո, բացառությամբ այն դեպքի, եթե քարտը թողարկված արտասահմանյան բանկը ներկայացնում է պաշտոնական գրություն Բանկին՝ քարտը Քարտապանին վերադարձնելու խնդրանքով, ընդ որում, տվյալ գրությունը պետք է պարունակի անհրաժեշտ տվյալներ Քարտապանի և առգրավված քարտի մասին, որոնք թույլ կտան պատշաճ նույնականացնել Քարտապանին:

ԳԼՈՒԽ 20. ՔԱՐՏԱՊԱՆԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

20.1. Քարտապանը Բանկ ներկայանալիս քաղվածք ստանալու կամ հաշվի շարժի և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու կամ գործարք կատարելու նպատակով պետք է Բանկի սպասարկող աշխատակցին ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթը:

20.2. Եթե Քարտապանը քարտի հետ կապված տեղեկատվությունը ցանկանում է ստանալ հեռախոսով, ապա նա կարող է զանգահարել Բանկի՝ շուրջօրյա +374 10 55-53-85 հեռախոսահամարին:

20.3. Բանկի աշխատակիցը մինչ տեղեկատվության տրամադրումը պարտավոր է նույնականացնել Քարտապանին՝ Բանկի կողմից սահմանված կարգին համապատասխան, ընդ որում, նույնականացման ընթացքում կարող են ստուգվել Քարտապանի բանկային գաղտնաբառը, անձնագրային տվյալները և այլ տեսակի տեղեկատվություն Քարտապանի վերաբերյալ:

20.4. Քարտապանին նույնականացնելուց հետո իրեն տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվությունը, հակառակ դեպքում Բանկի աշխատակիցը մերժում է տեղեկատվության տրամադրումը և ուղղորդում է Քարտապանին ներկայանալ Բանկի գլխավոր գրասենյակի սպասարկման սրահ կամ ցանկացած մասնաճյուղ:

ԳԼՈՒԽ 21. ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ

21.1. Քարտապանը վճարում է Բանկին քարտի սպասարկման հետ կապված Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարներ, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ համաձայնություն չի կայացվել:

21.2. Քարտի սպասարկման միջնորդավճարի առաջին վճարումը Քարտապանը կատարում է քարտը պատվիրելիս, իսկ հաջորդ վճարումները՝ Բանկի կողմից սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով:

21.3. Քարտով գործարքների իրականացման արդյունքում քարտային հաշվի մնացորդը գերազանցելու դեպքում քարտային հաշվին ձևավորվում է գերաճախս: Բանկի սակագներով սահմանված դեպքում և չափով Բանկը Քարտապանից գանձում է տույժ առաջացած գերաճախսի դիմաց:

21.4. Բանկի սակագներով քարտի համար սահմանված միջնորդավճարները և քարտի սպասարկման հետ կապված այլ վճարները՝ ներառյալ քարտային հաշվին ձևավորված գերաճախսը և տույժը, այլ պարտավորությունների գումարները Բանկի կողմից գանձվում են անակցեպտ եղանակով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է քարտային հաշվից, իսկ քարտային հաշվին միջոցների բացակայության կամ անբավարար լինելու դեպքում կարող է կատարվել Քարտապանի՝ Բանկում ունեցած բոլոր տեսակի այլ հաշիվներից:

21.5. Չեղարկված գործարքի գումարը Սպասարկողի կողմից վերադարձվելուց հետո Բանկը մուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում): Անկախ չեղարկված գործարքի գումարի վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

21.6. Քարտապանի կողմից Քարտը վաղաժամկետ Բանկ հանձնելու դեպքում երկրորդ և այլ տարիների համար գանձված սպասարկման վճարն ենթակա է վերադարձման՝ ըստ չօգտագործված ամիսների հաշվարկի:

21.7. Բանկը պատասխանատվություն չի կրում այլ բանկերի կողմից գանձվող միջնորդավճարների համար:

21.8. Բանկը պատասխանատվություն չի կրում Սպասարկողի կողմից մատուցված որևէ ծառայության դիմաց գանձված և Քարտապանի քարտային հաշվից ելքագրված վճարի համար:

21.9. Բանկի գործող սակագների հետ Դուք կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական կայքում՝ www.unibank.am:

ԳԼՈՒԽ 22. ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ (ՕՎԵՐԴՐԱՖՏ)

22.1. Հաշվի վարկավորումը (օվերդրաֆտ) կատարվում է Բանկում գործող ներքին իրավական ակտերին և սակագների համաձայն:

22.2. Հաշվի վարկավորման դեպքում դրամական պարտավորությունների վերադարձման (մարման) կարգը, պայմանները, ժամկետները սահմանվում են Բանկի և քարտապանի (վարկառուի) միջև կնքված վարկավորման պայմանագրով:

22.3. Տրամադրված դրամական միջոցների դիմաց հաշվարկվող տարեկան անվանական և փաստացի տոկոսադրույքները սահմանվում են Բանկի և քարտապանի (վարկառուի) միջև կնքված վարկավորման պայմանագրով:

ԳԼՈՒԽ 23. ՔԱՐՏԻ ՓԱԿՈՒՄ

23.1. Քարտի փակումն իրականացվում է քարտապանի գրավոր դիմումի համաձայն կամ քարտի գործողության ժամկետի ավարտի դեպքում, եթե Քարտապանը ցանկություն չի հայտնել վերաթողարկել քարտը:

23.2. Բանկը քարտի փակման դիմումը ստանալուց հետո ստուգում է քարտային հաշվի նկատմամբ արգելանքների կամ քարտային հաշվի փակումը սահմանափակող այլ գործոնների առկայությունը և վերջիններիս բացակայության դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում փակում է վճարային քարտը և քարտային հաշիվը:

23.3. Քարտի փակման դեպքում Քարտապանը պետք է քարտը վերադարձնի Բանկ: Քարտապանի կողմից քարտը չվերադարձնելու դեպքում քարտի փակման դիմումում Քարաստանը պարտավոր է իր ստորագրությամբ այդ մասին նշում կատարել: Բանկը պատասխանատվություն չի կրում քարտը չվերադարձնելու հետևանքով քարտով իրականացված գործարքների համար:

23.4. Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:

23.5. Քարտը փակելիս տվյալ քարտի բոլոր լրացուցիչ քարտերը նույնպես փակվում են:

ԳԼՈՒԽ 24. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

24.1. Քարտապանի իրավունք ունի՝

1) Օգտագործել Քարտը՝ որպես վճարային միջոց Գործարքներ կատարելու համար:

2) Դիմել Բանկին Լրացուցիչ քարտեր ստանալու համար, Լրացուցիչ քարտերը կասեցնելու համար՝ գրավոր տեղեկացնելով դրանց փակման մասին և վերադարձնելով դրանք Բանկին:

3) Բանկից ստանալ Քարտով և/կամ Լրացուցիչ քարտերով կատարված Գործարքների ամսական քաղվածքը:

4) Հանձնարարել Բանկին կասեցնել և/կամ ապակասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը:

5) Պատվիրել և ստանալ նոր Քարտ/Լրացուցիչ քարտեր՝ ժամկետները լրացած քարտերի փոխարեն:

6) Հիմնավոր պատճառներով և ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկել Քաղվածքում արտացոլված ցանկացած գործարք՝ Բանկի կողմից սահմանված ձևով գրավոր բողոքարկում ներկայացնելով Բանկ՝ ՀՀ օրենսդրությամբ և ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոններով սահմանված ժամկետում: Նշված ժամկետում Քաղվածքում արտացոլված Գործարքների դիմաց բողոքարկում չստանալու դեպքում այդ Գործարքները համարվում են Քարտապանի կողմից ընդունված և այլևս բողոքարկման ենթակա չեն: Ընդ որում,

Քարտապանի կողմից չթույլատրված կամ նրա կողմից չկատարված լինելու պատճառով Գործարքների դիմաց բողոքարկում կարող է ներկայացվել բացառապես Քարտի ռեկվիզիտները փոխարինող վերաթողարկում իրականացնելու դիմում կամ Քարտի փակման դիմում ներկայացնելուց հետո:

7) Հաշվին միջոցներ մուտքագրել ինչպես անձամբ, այնպես էլ իր հանձնարարությամբ՝ երրորդ անձի միջոցով, անկանխիկ կամ կանխիկ:

8) Ցանկության ժամանակ լուծել պայմանագիրը/դիմում-պայմանագիրը՝ գրավոր ծանուցելով Բանկին և մարելով առկա պարտավորությունները:

24.2. Քարտապանը պարտավորվում է՝

1) Քարտի բացման համար Բանկին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Բանկի սահմանված ցանկին համապատասխան, ինչպես նաև Բանկին տրամադրել իր կամ իր լիազորված անձի մասին հավաստի տեղեկություններ:

2) Իրականացնել Գործարքներ միայն Հաշվի մնացորդի (վարկային սահմանաչափի), Կանխկացման և Վճարային սահմանաչափերի սահմաններում:

3) Վճարել Բանկին Քարտի/Լրացուցիչ քարտերի և Հաշվի սպասարկման հետ կապված բոլոր վճարները, տույժերը և տուգանքները, որոնք բխում են սույն պայմանագրից, Բանկի կողմից հաստատված վճարային քարտերի սպասարկման սակագներից՝ համաձայն Կանոնների և ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոնների:

4) Դրամական միջոցների գերաժախս առաջանալու դեպքում մեկ ամսվա ընթացքում մարել առաջացած գերաժախսի գումարը և հաշվարկված տույժը:

5) Քարտի գործողության դադարեցման դեպքում այն 10 օրացուցային օրվա ընթացքում հանձնել Բանկին:

6) Ժամկետանց կամ անվավեր ճանաչված Քարտը վերադարձնել Բանկ:

7) Քարտի/Լրացուցիչ քարտերի կորստի կամ նրա ռեկվիզիտների և/կամ PIN-կոդի այլ անձանց հասանելի դառնալու կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին և կատարել Քարտի կասեցում: Քարտի կասեցումն իրականացնելուց հետո Բանկը պատասխանատվություն է կրում ցանկացած հավաստագրված գործարքի համար: Քարտի կասեցումը կարող է կատարվել բանավոր՝ Քարտի գաղտնաբառի օգտագործմամբ կամ գրավոր դիմումի ներկայացման միջոցով:

8) Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է Fraud քարտերի ցանկում:

9) Ստանձնել ֆինանսական պատասխանատվություն Քարտով/Լրացուցիչ քարտերով կատարված իր կողմից չթույլատրված և/կամ չիրականացված բոլոր Գործարքների համար, եթե չի իրականացվել Քարտի կասեցում:

10) Ստանձնել ֆինանսական պատասխանատվություն առանց հավաստագրման Քարտով/Լրացուցիչ քարտերով կատարված Գործարքների համար և/կամ անհրաժեշտության դեպքում Բանկ ներկայացնել գրավոր դիմում՝ Քարտով առանց հավաստագրման Գործարքների ներկայացումը կանխելու համար (առձեռն, e-mail, fax)՝ հստակ նշելով, թե ըստ MasterCard/Visa միջազգային վճարահաշվարկային համակարգերի տարածքային տարանջատման աշխարհի որ տարածաշրջաններում և ինչ ժամկետով է ցանկանում կանխել Քարտով իրականացված բոլոր Գործարքների ներկայացումը: Ընդ որում, Քարտով/Լրացուցիչ քարտերով իրականացված բոլոր Գործարքների ներկայացման կանխման նվազագույն ժամկետը կազմում է երկու շաբաթ՝ սկսած դիմումը ստանալու աշխատանքային շաբաթվա շաբաթ օրվանից երկու շաբաթվա ընթացքում:

11) Նախկինում կորցված Քարտը/Լրացուցիչ քարտերը գտնելու դեպքում վերադարձնել դրանք Բանկին:

12) Չբողոքարկել ՊԻՆ-կողմի մուտքագրմամբ իրականացված գործարքները՝ դրանք իր կողմից չթույլատրելու և/կամ չիրականացնելու հիմքերով:

13) Ողջամիտ ժամկետում Բանկին տեղեկացնել հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների փոփոխության մասին:

14) Քարտի/Լրացուցիչ քարտերի ժամկետային վերաթողարկում իրականացնելու վերաբերյալ իր որոշման մասին Բանկին տեղեկացնել Քարտի/Լրացուցիչ քարտերի ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ:

15) Գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

16) Սպասարկողներից գնված ապրանքների/մատուցված ծառայությունների որակից դժգոհ լինելու և/կամ ընդհանրապես ապրանքները/ծառայությունները չստանալու դեպքում համապատասխան կետից պահանջել պատշաճ որակի ապրանքի/ծառայության տրամադրում և միայն դրանից հետո դիմել Բանկին վճարված գումարի բողոքարկման գործընթաց սկսելու համար:

17) Բանկի պահանջով փոխհատուցել բողոքարկվող գումարի հետգանձման հետ կապված Բանկի կատարած բոլոր ծախսերը:

18) Երրորդ անձանց չփոխանցել Քարտը/Լրացուցիչ քարտերը և ՊԻՆ-կոդը:

19) Բանկից չպահանջել Գործարքների կատարման և քարտային հաշվին փաստացի հաշվանցման ժամանակահատվածում արտարժույթային փոխարժեքների տատանումից առաջացած հնարավոր կորուստների փոխհատուցում:

20) Համաձայնվել այլ բանկերին պատկանող սպասարկման կետերում կատարված Գործարքների փոխհաշվարկների իրականացման ժամանակ օգտագործվող վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքներին, ինչպես նաև Բանկի սպասարկման կետերում Գործարքների փոխհաշվարկներն իրականացնելու ժամանակ օգտագործվող Բանկի արտարժույթի փոխարժեքներին:

21) Հետ վերադարձնել Բանկի կողմից սխալմամբ Հաշվին մուտքագրված միջոցները ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այն պահից, երբ հայտնաբերվել է սխալ մուտքագրման փաստը կամ ստացել է դրա վերաբերյալ Բանկի գրավոր պահանջագիրը:

22) Քարտը ստանալուն պես անմիջապես ստորագրել Բանկի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերում Քարտի և ՊԻՆ-կոդը ստանալու վերաբերյալ, ինչպես նաև Քարտի դարձերեսի վրա նախատեսված հատուկ դաշտում և հետագայում գերծ պահել այն երրորդ անձանց կողմից օգտագործվելուց՝ Քարտը և ՊԻՆ-կոդը մշտապես պահելով իր անմիջական տիրապետման և օգտագործման ներքո, ընդ որում Քարտը և/կամ ՊԻՆ-կոդը չտրամադրել այլ անձանց, իսկ տրամադրելու դեպքում պատասխանատվություն կրել Քարտով կատարված գործարքների համար:

23) Խստորեն հետևել սույն Պայմաններին և պահպանել Բանկի և Քարտապանի միջև կնքված պայմանագրի դրույթները:

ԳԼՈՒԽ 25. ԲԱՆԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25.1. Բանկն իրավունք ունի՝

1) Ցանկացած օրինական եղանակներով ստուգել Քարտապանի վճարունակությունը և անձնական տվյալները:

2) մերժել վճարային քարտի թողարկումը և տրամադրումը հաճախորդին և միակողմանիորեն լուծել հաճախորդի հետ կնքված դիմում-պայմանագիրը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում, հաճախորդին ծանուցելու և քարտի տրամադրման համար նախապես վճարված գումարը հետ վերադարձնելու պայմանով:

3) Մերժել Քարտի վերաթողարկման ցանկացած դիմում առանց Քարտապանին բացատրությունների տրամադրման:

4) Իրավասու պետական մարմինների կողմից ստացված համապատասխան որոշման հիման վրա՝ համաձայն ՀՀ օրենսդրության կասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը:

5) Քարտապանի կողմից սույն Պայմանների խախտման դեպքում կասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը և առանց ծանուցման մարել քարտի գծով առաջացած ժամկետանց պարտավորությունները Բանկում բացված ընթացիկ/ավանդային հաշիվներից, իսկ դրանց անբավարար լինելու դեպքում ձեռնարկել պարտքերի մարմանն ուղղված, ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցներ՝ մուտքագրելով քարտապանի անունը համակարգի անբարեխիղճ Քարտապանների ցուցակում:

6) Քարտի կասեցման դեպքում կասեցնել նաև բոլոր Լրացուցիչ քարտերը:

7) Մերժել Քարտի կեղծման պատճառով կամ երրորդ անձանց կողմից օգտագործման հետևանքով հափշտակված գումարների բողոքարկումը, եթե գումարները հնարավոր չէ վերադարձնել համաձայն ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոնների:

8) Միակողմանիորեն փոփոխել Բանկի գործող սակագները և Կանոնները՝ տեղեկացնելով այդ մասին Բանկի լրատվական ստենդերի, Բանկի պաշտոնական կայքում տեղադրելու և այլ տպագիր նյութերի միջոցով, որոնք ուժի մեջ կլինեն համընդհանուր ծանոթացման համար հասանելի լինելու պահից:

9) Քարտի ժամկետը լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում Քարտապանի՝ Բանկ չներկայանալու դեպքում փակել քարտային հաշիվը:

10) Քարտից հրաժարվելու դեպքում Քարտապանին չվերադարձնել Քարտի սպասարկման վճարը:

Անակցեպտ կերպով Հաշվից, ինչպես նաև Բանկում բացված բոլոր տեսակի այլ հաշիվներից գանձել՝

1) սխալմամբ Հաշվին մուտքագրված գումարները,

2) պայմանագրով, Բանկի սակագներով և սույն Պայմաններով նախատեսված վճարները, տույժերը և տուգանքները,

3) ըստ ՀՀ օրենսդրության իրավասու պետական մարմինների կողմից ստացված որոշման հիման վրա գանձման ենթակա գումարները,

4) Քարտային հաշվի նվազագույն մնացորդի համալրման համար անհրաժեշտ գումարները,

5) Քարտի/Լրացուցիչ քարտերի միջոցով կատարված գործարքների գումարները՝ վճարահաշվարկային համակարգերից ստացված Փոխհաշվարկային փաստաթղթերի հիման վրա,

6) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, տվյալ դեպքում կիրառելի բոլոր հարկերը,

7) դիմում-պայմանագրի և սույն Պայմանների խախտումով իրականացված գործարքների գումարները,

8) անհրաժեշտության դեպքում Քարտապանին որոնելու աշխատանքների իրականացման ծախսերը,

9) Բանկի առջև Քարտապանի պարտավորությունների մարման համար առաջացած ծախսերը:

10) Քարտային հաշվի գերաժախս առաջանալու դեպքում և այն Քարտապանի կողմից ժամանակին չմարելու դեպքում կատարել Քարտի կասեցում և անակցեպտ գանձել անհրաժեշտ գումարը Քարտային հաշվի նվազագույն մնացորդից, ինչպես նաև կատարել տույժերի և տուգանքների հաշվեգրում՝ համաձայն Բանկի սակագների:

11) Գանձել վճարներ, տույժեր, տուգանքներ կապված Քարտի/Լրացուցիչ քարտերի սպասարկման և տրամադրման հետ՝ համաձայն սույն պայմանագրի և Բանկի սակագների:

12) Իրականացնել բոլոր անհրաժեշտ արտարժույթային փոխարկումները կապված փոխհաշվարկների իրականացման հետ, ընդ որում, Գործարքի փաստացի կատարման ամսաթվի և Գործարքի հաշվանցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում արտարժույթային փոխարժեքների տատանումներից Քարտապանի հնարավոր ֆինանսական կորուստները չեն կարող լինել բողոքարկման առարկա:

25.2. Բանկը պարտավորվում է՝

1) Քարտապանին Քարտը տրամադրել 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ հաշված պայմանագրի/դիմում-պայմանագրի կնքման օրվանից կամ նույն ժամկետում սահմանված կարգով վերաթողարկել Քարտը:

2) Քարտից հրաժարվելու դեպքում վերադարձնել Քարտապանին Քարտային հաշվի նվազագույն մնացորդը և հաշվարկված տոկոսագումարը:

3) Ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված ստանդարտների և կանոնների:

4) Յուրաքանչյուր ամիս Քարտապանին տրամադրել Քաղվածք՝ քարտապանի հետ համաձայնեցված կարգով:

5) Իրականացնել գումարների մուտքագրումը Հաշվին՝ ոչ ուշ, քան Բանկի դրամարկղ գումարի մուտքագրման օրվան հաջորդող բանկային օրը՝ կանխիկ մուտքի դեպքում, կամ ոչ ուշ, քան Բանկի թղթակցային հաշվին գումարի մուտքագրման օրվան հաջորդող բանկային օրը՝ անկանխիկ մուտքի դեպքում:

6) Սահմանված կարգով ընդունել Քարտապանի կողմից Գործարքների բողոքարկման դիմումները և ձեռնարկել բոլոր ընթացակարգերը Քարտապանի շահերը պաշտպանելու համար՝ համաձայն ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոնների:

7) Անակցեպատ ձևով քարտապանի կողմից Բանկում բացված բոլոր տեսակի հաշիվների միջոցներից մարել քարտի և քարտային հաշվի գծով առաջացած բոլոր տեսակի պարտավորությունները:

8) Քարտի կորստի վերաբերյալ Քարտապանից ծանուցում ստանալուց հետո կատարել Քարտի կասեցում: Բանկը պատասխանատվություն է կրում կորցրած Քարտի ոչ օրինական օգտագործման համար միայն կորստի վերաբերյալ ծանուցում ստանալու և միայն դրանից հետո իր կողմից հավաստագրված գործարքների համար:

9) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել պայմանագրի/դիմում-պայմանագրի գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 26. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

26.1. Քարտապանը պատասխանատվություն է կրում պայմանագրով, դիմում-պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված իր պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար:

26.2. Այն վնասը, որը պատճառվել է Բանկին Քարտապանի կողմից պայմանագրով, դիմում-պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, ենթակա է փոխհատուցման ամբողջ չափով:

26.3. Բանկը պատասխանատվություն է կրում Քարտապանի, Քարտի և Գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության, պայմանագրի, դիմում-պայմանագրի և սույն Պայմանների:

26.4. Բանկը պատասխանատվություն չի կրում իր վերահսկողության շրջանակներից դուրս տեղի ունեցած կոնֆլիկտային իրավիճակների համար, որոնք կապված են այլ բանկերի սպասարկման կետերի կողմից Քարտը/Լրացուցիչ քարտերը սպասարկման չընդունելու, իրեն կամ այլ բանկերին պատկանող ծրագրատեխնիկական սարքերի անսարքության (Բանկումատներ և տերմինալներ), ինչպես նաև Քաղվածքների ինքնաշխատ եղանակով ուղարկման դեպքում ծրագրային խափանումների հետևանքով Քաղվածքների չստացման համար:

26.5. Բանկը պատասխանատվություն չի կրում բոլոր այն դեպքերի համար, երբ Քարտով կատարված գործարքի վերաբերյալ Քարտապանին կարճ հաղորդագրության (sms) միջոցով Բանկի անհապաղ տեղեկացումից հետո Քարտապանի կողմից չի ձեռնարկվել կանխարգելիչ միջոցառումներ և անհապաղ չի հայտնել Բանկին գործարքն իր կողմից չկատարելու մասին:

26.6. Քարտային հաշվի մուտքերի և ելքերի վերաբերյալ sms ծառայություն ակտիվացված լինելու դեպքում Քարտապանի տրամադրած հեռախոսահամարին ուղարկված sms-ները

Քարտապանին Բանկից անկախ հանգամանքներով չհասնելու և դրա հետևանքով Քարտապանի կրած վնասների կամ ունեցած կորուստների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

26.7. Բանկը պատասխանատվություն չի կրում համացանցում 3D Secure անվտանգության համակարգ ունեցող կայքերի միջոցով գործարք կատարելու անհնարինության դեպքում, եթե Քարտապանը չի դիմել Բանկ կարճ հաղորդագրության ծառայություն (sms) ակտիվացնելու համար, կամ դիմել է, սակայն տրամադրել է ոչ վավեր հեռախոսահամար, կամ այդ ծառայությունն ակտիվացված է, սակայն կարճ հաղորդագրության ուղարկման պահին հեռախոսահամարը գտնվում է անհասանելի վիճակում կամ եթե կարճ հաղորդագրությունը Քարտապանին չի հասել երրորդ անձի գործողության կամ անգործության պատճառով կամ Բանկից չկախված որևէ այլ հանգամանքի պատճառով:

26.8. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից չվավերացված այն գործարքների համար, որոնց կատարման ընթացքում կիրառվել է ՊԻՆ-կոդ, եթե գործարքն իրականացվել է միկրոպրոցեսորային (չիպային) քարտի միջոցով:

26.9. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից կատարված այն գործարքների համար, որոնք կատարվել են Սպասարկողների կողմից ArCa, MasterCard, Visa վճարահաշվարկային համակարգերի կանոնների և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ:

Ծանուցում

Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև Դիմում-պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետև՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մ. Խորենացի 15 «Էլիտ Պլազա» գործարարական համալիր, 2-Ա5 սենյակ,

Հեռախոսը՝ 58-35-14,

Ինտերնետային կայքը՝ www.adgf.am,

Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

2. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	մինչև 16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ. ☐ (այն համարել ավանդների դեպքում, որոնց համարել ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)

չերաշխավորված ավանդ. ☐

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

Սույն ծանուցումը վերաբերվում է միայն ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ, 0025, ք. Երևան, Չարենցի, 12, № 53, 1-5, (+374 10) 71 22 22, 59 55 55